

# Երեւոնեյա այապրան

ՄԱՅՐ ԱԹՈՒ ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱԾՆԻ  
ԿՐՈՆԱԿԱՆ, ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ,  
ԼՐԱՏՎԱԿԱՆ ԵՐԿՇԱԲԱԹԱԹԵՐԹ

## Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՅ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՈՒՂԵՐԶԸ ՀԱՅՈՅ ԲԱՆԱԿԻ ՕՐՎԱ ԱՌԻԹՈՎ (28 հունվարի, 2014 թ.)



Մայր Աթոռ Սբ Էջմիածնից՝ քրիստոսահաստատ մեր նվիրական սրբավայրից, Հայոց բանակի օրվա առիթով հայրապետական Մեր օրհնությունն ու շնորհավորանքներն ենք բերում սիրեցյալ մեր ողջ ժողովրդին և քաջարի մեր բանակի զորաց ու զորակամաց:

Մեր անկախ պետականության մեծ ձեռքբերումն է Հայոց բանակը, որն Աստծու օրհնությամբ մարտունակ ու զորեղ՝ արթուն պահպանում է ազատ, խաղաղ ու ստեղծարար կյանքը մեր հայրենիքի: Հայոց բանակը մշտապես կրողն է եղել մեր ժողովրդի հավատավոր, ազատատենչ հոգու, որով մեր պատմության վճռական պահերին կերտել է իր հաղթանակները: Այսօր էլ մեր Բանակի մարտիկները հերոսանում են իրենց կյանքն են ընծայում հայրենիքին՝ դասվելով բոլոր ժամանակներում ի սեր հայրենյաց մարտնչած ու նահատակված քաջերի կողքին: Այս տոնական օրը մենք հիշում

ու մեծարում ենք հայ գեների փառքը կերտած մեր պանծալի զինվորներին, զորավարներին, անմահ մեր հերոսներին և բոլոր նրանց, ովքեր նվիրվեցին անկախ պետականության ստեղծման վեհ և նվիրական գործին:

Մտադրում ենք, որ Հայոց բանակի մարտիկները հոգու նվիրումով ու արիությամբ, նախաձայնողորեն շարունակեն իրենց մշտարթուն ծառայությունը և բազմապատկեն Հայոց բանակի ձեռքբերումները՝ պաշտպանելով մեր երկիրը, մեր արժեքներն ու սրբությունները:

Թող Ամենակալ Տերը խաղաղություն շնորհի ողջ աշխարհին և Իր Ամենախնամ Աջի հովանին տարածյալ պահի հայոց երկրի, զորաց ու զորակամաց և ժողովրդի վրա:

Մեր Տեր Հիսուս Քրիստոսի շնորհը, սերը և խաղաղությունը բոլոր լինեն ամենքիս հետ: Ամեն: Օրհնությամբ՝

ԳԱՐԵԳՈՍ Բ  
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՅ

## Սբ Պատարագ՝ Հայոց բանակի օրվա առիթով

Հունվարի 26-ին՝ Բանակի օրվա առիթով, Մայր Աթոռ Սբ Էջմիածնում Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Մայրազույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսի հանդիսապետությամբ մատուցվեց սբ Պատարագ: Պատարագիչն էր Հայոց բանակի հոգեւոր առաջնորդ Կրթա-նես Եպս Աբրահամյանը:

Ներկա էին Հայ Եկեղեցու թեմակալ առաջնորդներ, Մայր Աթոռի միաբաններ, ՀՀ պաշտպանության նախարար Սեյրան Օհանյանը, ՀՀ բանակի բարձրագույն սպայական կազմը, Հայկական բարեգործական ընդհանուր միության նախագահ Պերճ Սեդրակյանը և ՀԲԸՄ-ի անդամներ:

Իր քարոզում Կրթա-նես սրբազան անդրադարձավ Հայոց բանակի ունեցած կարեւոր դերին ու նշանակությանը: «Հայտնի ճշմարտություն է, որ քրիստոնեությունը խաղաղության ու հանդուրժողականության, համերաշխության ու ներդաշնակության, այսինքն՝ սիրո կրոն է, որ մարդկանց թելադրում է աշխարհում ապրել առանց տարածայնությունների ու թշնամանքի: Թվարկված պայմանները ցանկալի են բոլորիս համար: Ամենքս էլ, սակայն, գիտակցում ենք, որ ի-



րականում այսօր թվարկվածներս պակասում են, ուստի անհրաժեշտություն է դառնում ունենալու մի զորավոր պատնեշ, որը կարող է հակադրվել բռնությանն ու բիրտ ուժին: Ամեն երկրի համար այդ զորությունը բանակն է: Զանի դեռ երկրի վրա տիեզերածավալ խաղաղություն են մարդկանց միջեւ հաճություն չեն հաստատվել, բանակն անհրաժեշտ պայման է մնում՝ պետությունների ներքին և արտաքին անդորրն ապահովելու համար...

Մեր պետության պարագայում գեներն ու բանակը երկրին կենսա-

կանոն են անհրաժեշտ են պաշտպանվելու նպատակով և ոչ թե աստիճանաբար ձգտումների և ոտնձգությունների, այլ պրա արշավելու, ուրիշի սահմանները զավթելու և անվտանգության արյունը հեղելու համար: Բանակներ կան, որոնք մահ են սփռում, բանակներ էլ կան, որոնք վերահաստատում են խաղաղությունն ու սերը: Ինքնապաշտպանությունը մարդու բնական, անկապտելի իրավունքներից մեկն է, որն էլ ստիպում է ունենալ ուժեղ բանակ: Մեր երկրի վրա եկող թշնամին պետք է գիտակցի, որ իր բռնության դիմաց կարող է համարժեք պատասխան ստանալ, սրով է զավիս՝ կարող է սրից էլ ընկնել: Խաչը հոգեւոր գեներ է՝ ընդդեմ չարի, որը պահպանում է իրեն ապավիտողին, իսկ շրջվելով՝ դառնում է ֆիզիկական գեներ՝ պաշտպանելով նաեւ իր խաչի ապավիտողի մարմինը: Այս առումով հայ գինվորը պարտ է գիտակցել, որ հաղթանակները չեն տրվում միմիայն գեներով, այլ՝ հավատքի այն զորությամբ, որ դարձրե շարունակ սերմանել են մեր մեջ մեր սուրբ և քրիստոսաշավիղ հայրերը», - իր խոսքում մասնավորապես նշեց սրբազան հայրը:

Շարունակությունը՝ էջ 2



## Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց ՀԲԸՄ-ի նախագահին

Հունվարի 27-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածնում Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց ՀԲԸՄ-ի նախագահ Պերճ Սեդրակյանին և տիկին Վերա Սեդրակյանին, ինչպես նաեւ՝ ՀԲԸՄ-ի փոխնախագահ Սիման Սիմանյանին և տիկին Անժել Սիմանյանին:

Հանդիպման ընթացքում տիար Սեդրակյանը Նորին Սրբությանը ներկայացրեց ՀԲԸՄ-ի կողմից Հայաստանում և Արցախում իրականացվող ծրագրերը: Ամենայն Հայոց Կաթողիկոսը և ՀԲԸՄ-ի նախագահը նաեւ քննարկեցին Մայր Աթոռ Ս. Էջմիածնի և ՀԲԸՄ-ի համատեղ եկեղեցաշինական, կրթական և սոցիալական ծրագրերը, եկեղեցական կյանքին առնչվող գանազան խնդիրներ: Նո-

րին Սրբությունն այս առիթով իր օրհնությունն ու գնահատանքը բերեց ՀԲԸՄ-ի նախագահին և ՀԲԸՄ-ի անդամներին՝ նրանց եկեղեցանվեր ոգու և Հայ Եկեղեցուն ու Մայր Աթոռ Ս. Էջմիածնին ցուցաբերվող մշտական զորակցության, ազգ-օգուտ և հայրենաշեն նվիրյալ գործունեության համար:

Մասնավոր անդրադարձ կատարվեց սիրիահայության վիճակին, ինչպես նաեւ՝ Մայր Աթոռի և Հայ Եկեղեցու թեմերի կողմից Սիրիայի հայ համայնքին, Հայաստանում և այլ երկրներում ապաստան գտած սիրիահայ ընտանիքներին ցուցաբերվող օգնությանը: Վեհափառ Հայրապետը և ՀԲԸՄ-ի նախագահը, իրենց մտահոգությունն արտահայտելով Սիրիայում տիրող

ծանր կացության առնչությամբ, կարեւորեցին աշխարհասփյուռ հայության և ազգային հաստատությունների ջանքերի մեկտեղումը՝ ի նպաստ հակամարտության դժվարությունները կրող հայորդիներին:

Զրույցի ընթացքում Ամենայն Հայոց Կաթողիկոսը և ՀԲԸՄ-ի ներկայացուցիչներն արձարծեցին նաեւ Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցին առնչվող հարցեր: Նորին Սրբությունն ընդգծեց կարեւորությունը տարելիցին ընդառաջ իրականացվելիք միջոցառումների, որոնք պիտի նպաստեն հայ ժողովրդի նկատմամբ արդարության վերականգնմանը: Վեհափառ Հայրապետը մասնավորապես ներկայացրեց Հայոց

եղեռնի գոհերի սրբադասման ուղղությամբ Հայ Եկեղեցու սրբադասման հանձնախմբի կողմից իրականացվող աշխատանքները, որոնք ընկալության պիտի առնվեն տարեվերջին գումարվելիք Հայ Եկեղեցու եպիսկոպոսաց ժողովի ընթացքում:

Հանդիպման ավարտին ՀԲԸՄ-ի նախագահ Պերճ Սեդրակյանը և ՀԲԸՄ-ի փոխնախագահ Սիման Սիմանյանը, շնորհակալություն հայտնելով ընդունելության համար, վստահեցրին Ամենայն Հայոց Հայրապետին, որ ՀԲԸՄ-ն, հավատարիմ իր առաքելությանը և եկեղեցասեր ոգուն, պիտի շարունակի ըստ ամենայնի իր ազգայնությունը բերել Մայր Աթոռին և նրա ազգանվեր ծրագրերին:

# Սբ Պատարագ՝ Հայոց բանակի օրվա առթիվ



Սկզբը՝ էջ 1

Պատարագի ավարտին Մայր տաճարի Իջման ս. Սեդակի առջև, հանդիսապետությամբ Ամենայն Հայոց Կաթողիկոսի, կատարվեց Հանրապետական մաղթանք՝ ի շինություն և ի պայծառություն Հայաստան աշխարհի ու Հայոց բանակի:

Հանրապետական մաղթանքից հետո Գետրոգյան հոգեւոր ճեմարանի հանդիսությունների դահլիճում տեղի ունեցավ պաշտոնական ընդունելություն, որի ժամանակ Ամենայն Հայոց Կաթողիկոսն իր օրհնությունն ու բարեմաղթանքները բերեց ներկաներին՝ մեկ անգամ եւս ամենքին շնորհավորելով Հայոց բանակի 22-րդ տարեդարձի առիթով: Իր խոսքում Նորին Սրբությունը գոհունակությամբ նշեց, որ Հայոց բանակն իր զինվորների ու զորականների անձնվեր ծառայության շնորհիվ այսօր ապահովում է երկրի խաղաղությունը՝ անվրդով կյանք ստեղծելով մեր ժողովրդի ու հայրենիքի համար: Վեհափառ Հայրապետը ՀՀ զինված ուժերի սպասավորներին մաղթեց Տիրոջ օրհնության ներքո երկար տարիների քաջառողջ կյանք, արդյունավոր ծառայություն և նորանոր ձեռքբերումներ՝ ի սեր Մայր հայրենիքի և ի փառս մեր ժողովրդի:

Այնուհետև տեղի ունեցավ շքանշանների հանձնման արարողություն: Ի գնահատություն հայրենիքին ու հավատավոր ժողովրդին մատուցած ծառայությունների, Հայոց բանակի հոգեւոր առաջնորդ Վրթանես եպս Աբրահամյանի միջնորդությամբ, Վեհափառ Հայրապետը Հայ Եկեղեցու «Սբ Ներսես Շնորհալի» պատվով բարձր շքանշանով պարգե-

ւատրեց գեներալ-մայոր Սամվել Կարապետյանին, գեներալ-մայոր Պողոս Պողոսյանին, տիար Գառնիկ Հայրապետյանին, գնդապետ Դանիել Բալայանին և գնդապետ ՕՍԻԿ Գասպարյանին:

Հայրապետական սրբատառ կոնդակն ընթերցեց Վրթանես եպս Աբրահամյանը: «Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից Հայոց բանակի օրվա առիթով

բերում ենք Ձեզ հայրապետական Մեր օրհնությունն ու բարեմաղթանքները և գոհունակությամբ անդրադառնում հայրենի մեր երկրին մատուցած Ձեր ծառայություններին: Արցախյան հերոսամարտի տարիներին հազարավոր մեր հերոս զավակների հետ միասին Դուք Ձեր կարողությունները հոգու ողջ նվիրումով ի սպաս բերեցիք մեր Հայրենիքի պաշտպանության սուրբ գործին: Աստված պարգևե մեր հողի ազատագրման ծանր ու երկարատև պայքարում մեր ռազմա-



կան հաջողությունները կերտվեցին Ձեզ պես հայրորդիների քաջության ու անձնագոհության շնորհիվ, ովքեր արիաբար դիմակայեցին հակառակորդի բոլոր հարձակումներին և հաղթական էջեր հավելեցին մեր արդի պատմությանը: Չինադադարի պայմաններում Դուք շարունակում եք տարբեր պաշտոններում արդյունավոր ծառայությամբ ավանդ բերել Հայոց բանակի զորացմանը՝ ի խնդիր մեր երկրի ու ժողովրդի ապահովության ու առաջընթացի: Ձեզ շնորհված բազմաթիվ պետական ու զինվորական կոչումներն ու պարգևները արժանի վկայությունն են տասնամյակների Ձեր գովարժան վաստակի»,- մասնավորապես նշված է շքանշանակիրներին շնորհված հայրապետական կոնդակում:

# Հրապապ կոչ

## Սիրիայում արդար խաղաղության հաստատման

Հունվարի 15-17-ը ժնեւում՝ Էկումենիկ կենտրոնում, տեղի ունեցավ Եկեղեցիների համաշխարհային խորհրդի Էկումենիկ խորհրդակցություն՝ Սիրիայի վերաբերյալ, որին մասնակցեցին տարբեր Եկեղեցիների հոգեւոր առաջնորդներ և ներկայացուցիչներ Սիրիայից, Միջին Արեւելքի Եկեղեցիների խորհրդից, Վատիկանից և Եկեղեցիների համաշխարհային խորհրդից: Խորհրդակցության Ամենայն Հայոց Կաթողիկոսությունը ներկայացնում էր ԵՅԻ Կենտրոնական կոմիտեի անդամ Վիգեն արք. Այբազյանը (Հայ Եկեղեցու Ամերիկայի հայոց Արեւելյան թեմ):

Խորհրդակցության արդյունքում մասնակիցները հանդես եկան հայտարարությամբ՝ ուղղված առաջիկայում Սիրիայի վերաբերյալ կայանալիք «Ճնե II» համագումարին, որում մասնավորապես ասված է.

«Քրիստոնյաները քրիստոնության տարածումից ի վեր մշտապես իրենց ներկայությունն են պահպանել Սիրիա երկրում: Այսօր, որպես Եկեղեցիներ և Եկեղեցու անջվող մարդասիրական կառույցներ, մենք ամեն օր Սիրիայի ժողովրդի հետ ենք՝ ե՛ր երկրի ներսում, ե՛ւ փախստականների հետ: Այստեղ մենք ուղիներ ենք փնտրում բարձրացնելու նրանց ձայնը:

Մենք անհանգստանում ենք բոլոր այն մարդկանց համար, ովքեր տուժել են Սիրիայում՝ անխնա բռնության և մարդկային աղետի պատճառով: Անհամար թվով անմեղ երեխաներ, կանայք և տղամարդիկ են սպանվում, վիրավորվում և հեռացվում իրենց տներից: Մենք լսում ենք նրանց լացի ձայնը՝ հասկանալով, որ երբ «մեկը տառապում է, մենք էլ ենք տառապում իր հետ» (Ա Կորնթ. ԺԲ 26):

Երկրում տիրող ճգնաժամին ոչ մի ռազմական լուծում չի կարող լինել: Ջանալով հավատարիմ մնալ բոլոր մարդ արարածների հանդեպ Աստծո տաճած սիրուն և էլնելով նաեւ միջազգային մարդասիրական իրավունքի համատեքստից՝ ներկայացնում ենք խաղաղության հաստատման ուղղված գործողությունների և ուղեւիշների ներքոհիշյալ պահանջը:

Դիմում ենք ձեզ՝ «Ճնե II» համագումարի մասնակիցներին.

1. Հետամուտ լինել Սիրիայում բոլոր զինված հակամարտությունների և թշնամության անհապաղ դադարեցմանը: Կոչ ենք անում հակամարտության բոլոր կողմերին՝ ազատ արձակել ձերբակալված և ամենանցված անձանց: Հորդորում ենք ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդին՝ միջոցներ ձեռք առնել՝ վերջ դնելու համար Սիրիա գեւքի և օտարերկրյա զինվորների հուցին:

2. Ապահովել, որ Սիրիայի բոլոր խոցելի համայնքները և հարեւան երկրներում ապաստան գտած փախստականները պատ-

շած հումանիտար օգնություն ստանան: Այնտեղ, ուր բնակչության մի ստվար զանգված նման լուրջ վտանգի մեջ է, կարելի է հումանիտար լիարժեք մի մուտք՝ համաձայն միջազգային իրավունքի և պաշտպանության պատասխանատվության:

3. Չարագցնել բազմակողմանի և ընդգրկուն գործընթաց Սիրիայում՝ արդար խաղաղության հաստատման և երկրի վերակառուցման համար: Հասարակության բոլոր հատվածները (ներառյալ կառավարություն, ընդդիմություն և քաղաքացիական հասարակություն) պետք է ներառվեն սիրիական խնդրի լուծման մեջ՝ հանուն Սիրիայի ժողովրդի: Մենք գիտակցում ենք կանանց և երիտասարդներին այս գործընթացներում ներգրավելու անհրաժեշտությունը:

«Ճնե II»-ը պետք է ձեւափոխվի խաղաղություն կառուցող գործընթացի՝ արձագանքելով Սիրիայի ողջ ժողովրդի օրինավոր սպասումներին: Մենք առաջարկում ենք հետևելու ուղիները:

-խաղաղության հաստատման ուղղված որեւէ գործընթաց պետք է առաջնորդվի Սիրիայից: Այն պետք է լինի թափանցիկ և վստահելի, որպեսզի սիրիացիները կարողանան վճռել իրենց երկրի ճակատագիրը: Նման գործընթացը պահանջում է Արաբական Լիգայի, ՄԱԿ-ի և ներկա ճգնաժամում ներգրավված բոլոր կողմերի կառուցողական ներգրավվածություն:

-Բոլոր ջանքերը պետք է գործարկվեն՝ ապահովելու Սիրիայի խաղաղությունը, տարածքային ամբողջականությունը և անկախությունը:

-Սիրիայի հասարակության բազմաէթնիկ, բազմակրոն և բազմադավան բնույթը և ավանդույթը պետք է պահպանվի: Սիրիական հասարակության վառ խճանկարը պահանջում է հավասար իրավունքներ իր բոլոր քաղաքացիների համար: Մարդու իրավունքները, արժանապատվությունը և կրոնական ազատությունը ամենքի համար պետք է խթանվեն և պաշտպանվեն միջազգային նորմերին համապատասխան:

Որպես քրիստոնյաներ՝ միաձայն կոչ ենք հնչեցնում՝ Սիրիայում արդար խաղաղության հաստատման համար: Այս խաղաղությանը հասնելու նպատակով մենք պետք է միասին աշխատենք մեր մահմեդական քույրերի և եղբայրների հետ, որոնց հետ ունենք ոչ միայն ընդհանուր պատմություն, այլև հոգեւոր և սոցիալական արժեքներ: Մենք վստահություն կառուցելու միջոցով ենք ջանում աշխատել հանուն ազգային հաշտության և ապաքինման:

«Երանի՜ խաղաղարարներին» (Մատթ. Ե 9):»

# Աստվածաբանական երկխոսության համաժողով Հնդկաստանում

Հունվարի 28-ին Հնդկաստանի Կերալա քաղաքում իր աշխատանքն սկսեց Կաթողիկ և Հին Արեւելյան Ուղղափառ Եկեղեցիների միջև պաշտոնական աստվածաբանական երկխոսության

միացյալ միջազգային համաժողովը: Համաժողովին Ամենայն Հայոց Կաթողիկոսությունից մասնակցում էր Մայր Աթոռի միջեկեղեցական հարաբերությունների բաժնի տնօրեն, Արթիկի

թեմի առաջնորդ Հովակիմ եպս Մանուկյանը և Մայր Աթոռի հրատարակչական և պաշտոնական մամուլի բաժնիների տնօրեն Շահե վրդ. Անանյանը, իսկ Մեծի Տանն Կիլիկոն Կաթողիկոսությունից՝ Նարեկ արք. Ալամեզյանը:

Հունվարի 28-ին համաժողովի մասնակիցներն առանձին հանդիպումով ըննարկեցին ընդհանուր խնդիրներ, որի ժամանակ Հովակիմ եպս Մանուկյանը ներկայացրեց Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցի առիթով Մայր Աթոռում կազմակերպվելիք միջոցառումները, ինչպես նաև անդրադարձավ Ամենայն Հայոց Կաթողիկոսի դերակատարությանը՝ որպես Եկեղեցիների համաշխարհային խորհրդի համա-նախագահի:

Պլենար նիստի ընթացքում, որը նախագահում էին Նարեկ արք. Ալամեզյանը և Քրիստո-



նելության միասնության ջատագովման պապական խորհրդի նախագահ Կարդինալ Կուրո Կոխը, Շահե վրդ. Անանյանը ներկայացրեց «Երուսաղեմը Պատարագի և ուխտագնացության միջև. Հայկական ավանդության ուսումնասիրություն» աշխատանքը: Ապա Հովակիմ եպս Մանուկյանն առանձնազրույց ունեցավ Կարդինալ Կուրո Կոխի հետ:

Հունվարի 29-ին մասնակիցներին պաշտոնական ընթրիքի

ընդունեց Հնդիկ Մալանկարա Ուղղափառ Եկեղեցու պատրիարք Մար Թոմա Պաուլոս Բ-ն:

Հնգօրյա համաժողովի ընթացքում ըննարկվեցին Կաղ Եկեղեցու Պատարագների և ուխտագնացությունների ավանդույթին վերաբերող թեմաներ:

Այս օրերին ժողովականները նաեւ ներկա գտնվեցին Հնդիկ Մալանկարա Ուղղափառ Եկեղեցու ճեմարանի 200-ամյակին նվիրված միջոցառմանը:

# ՎՐԱՇԱԴԵՊ ՎԿԱՅՈՒԹՅՈՒՆ

«... Բանգի պատվիրանի գլխավորը սերն է՝  
բխած սուրբ սրտից, բարի խղճմտանքից եւ անկեղծ  
հավատից»:  
Ա Տիմոթ. Ա 5



Բավական ժամանակ է անցել այն օրվանից, երբ սբ Յովհաննես Մկրտիչը, տեսնելով դեպի իրեն եկող Զրիստոսին, տվեց թերես մարդկությանը հայտնի առավել ճշգրիտ բնորոշումներից մեկը. «Ահա՛ Գառն Աստծո, որ վերացնում է աշխարհի մեղքը» (տե՛ս Յովհ. Ա 29): Այդուամենայնիվ, մարդկության ոյունրաբեկ հիշողության անծավում տակավին կենդանի ու պատկերավոր է բեթղեհեմյան դաշտերում տեղի ունեցած անօրինակ հրաշքը, երբ Աստծո անեղբ փառքը խաղաղություն, կարեկցանք, հոգատարություն եւ բարեհաճություն, զոջման եւ մխթարության ակնկալիքներ սփռեց վեհերոտ ու անսահման դժբախտ մարդկանց ուղեկորույն հոգիներին:

Ավետարանական ընթերցվածը պատմում է, որ Տիրոջ՝ Գալիլիա հասնելու երրորդ օրը Կանա քաղաքում հարսանիք կար, որին մասնակցում էր եւ Տիրամայրը: Գարսանիքի են հրավիրվում նաեւ Զրիստոսն ու իր աշակերտները: Եվ երբ գինին պակասում է, Աստվածամայրը դիմում է Որդուն՝ ասելով. «Գինի չունեն», իսկ Զրիստոսը պատասխանում է. «Ինչ ես ուզում եմ ինձից, ով կին, Իմ ժամանակը դեռ չի հասել»: Ապա Տիրամայրը սպասավորներին հորդորում է անսալ Զրիստոսին: Զրիստոսը լվացվելու համար նախատեսված տարաները ջրով լցնել է տալիս բերնեբերան եւ ասում. «Զիմա վերցրե՛ք եւ տարե՛ք սեղանապետին», եւ երբ սեղանապետը ճաշակում է մատուցված գինին, գովում է փեսային՝ ասելով. «Ամեն մարդ նախ ընտիր գինին է մատուցում, եւ ապա երբ հարբած են, այն ժամանակ՝ վատը: Իսկ դու ընտիր գինին մինչեւ հիմա պահել ես»: Զիստոսը, ինչպես Աստվածաշունչն է հավաստում, այս ա-

ռաջին նշանն արեց Գալիլիայի Կանա քաղաքում՝ որպես սկիզբը նշանների, եւ հայտնեց իր փառքը... ու աշակերտները հավատացին նրան:

Ս. Գրքի ամենախնդրահատուկ պատումներից մեկն է «Կանայի հարսանիքը», քանի որ թեպետ առանձին գլուխ չէ եւ ոչ էլ առակ կամ հրաշքի վկայություն, այդուհանդերձ՝ ինքնատիպ կերպով առանձնանում է իր ուրույն շեշտադրությամբ՝ միաժամանակ հարազատ մնալով Ավետարանի ոգու պատգամին եւ բովանդակում առակին հատուկ խորություն՝ փոքրի, քչի մեջ տեղավորելով հսկայածավալ մի խորհուրդ:

Վկայությունն այս գարմա-նալու չափ հրաշադեպ է, քանզի հենակետը ո՛չ թե իրարությանց անգիտությունն է կամ ունայնությունը, այլ սերը՝ բխած սուրբ սրտից, բարի խղճմտանքից եւ անկեղծ հավատքից:

Սույն պատմությունը նախ եւ առաջ հավաստում է, որ կեցության ներդաշնակության հիմքում բարոյական օրենքների գարգացումն է դրված, խղճի մտքը ապրելու անհրաժեշտությունը, որտեղ մեծապես կարեւորվում է բարիք գործելու, մարդասիրության, մասնավորապես՝ որդեհիրության, հետեւապես նաեւ՝ ծնողասիրության ազնիվ ու երբեմն դժվարին իրողությունը: Եվ սա ոչ թե ստիպողական, այլ կենսական անհրաժեշտություն է, ինչպես մի առիթով նկատել է տալիս սբ Զակարյոս առաքյալը. «Եթե մեկը գիտե բարին եւ չի անում, մեղք է գործում»: Զիրավի, մարդկային կարճաժող կյանքում հաճախ են վիճակվում ստիպողությունը, հարկադրանքն ու համակերպությունն ու այնպիսի դրություններ, երբ, որպես կանոն, պարզապես դժվար է բացատրություն գտնելը:

Շարունակությունը՝ էջ 4

## ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆԵՐ

### ՂՈՒՎԱՍ Կ ԿՎՐՆԵՋԻ (1780-1799)

Սկիզբը՝ 2013-ի թիվ 21-24, 2014-ի թիվ 1

Նապոլեոնը հուլիսի 24-ին գրավեց Կահիրեն եւ չնայած օգոստոսի 1-ին Աբուբիրում՝ անգլիացիների դեմ ճակատամարտում, կորցրեց իր տորմիդը, սակայն իր տիրապետությունը Եգիպտոսում ընդարձակեց: Նրա հաջողություններն անդրադառնում էին Պաղեստինի եւ Ասորիքի քրիստոնյաների, մասնավորապես՝ Զայոց պատրիարքության վրա: Զորդորում էին պատրիարքին ու միաբաններին, որ թողնեն հեռանա: Սակայն Կ. Պոլսից էլ հակառակն էին հորդորում: Օսմանյան կայսրությունը, բնականաբար, Եգիպտոսի արշավանքի հետեւանքով թշնամացավ Ֆրանսիայի հետ: Թուրքերը որոշեցին կանխել Նապոլեոնի արշավանքը Սիրիա, քանի որ Նապոլեոնն իր ձեռքի տակ դեռ 30000 զինվոր ուներ: Նա դրանով էլ Եգիպտոսն էր ուզում պահել, եւ Ասորիքը նվաճել: 1799 թվի փետրվարի 9-ին ֆրանսիացիները գրավեցին Արիշ ավանը, 19-ին՝ Արիշ բերդը, հաղթականներն անցան Գազա եւ մարտի 1-ին բանակ դրեցին Ազդոդի դիմաց: Ռամլեն եւ Լիտտան չդիմադրեցին, Յուպպեն կռվով գրավվեց եւ թալանվեց: Պատրաստվեցին դիմադրելու ֆրանսիացիներին: Ժողովրդին հանգստանցնելու համար Նապոլեոնը հայտարարություն ուղարկեց Նաբուս, Երուսաղեմ եւ այլ քաղաքներ, թե կռիվը մամուլների դեմ է, եւ ինքը նրանց դեմ գործելու միտք չունի: Դա Երուսաղեմացիներին չհանգստացրեց, որոնք քրիստոնյաներին միշտ կասկածանքով էին նայում: Փետրվարի 14/25-ին 2000-ից ավելի մարդ բանտարկվեց Սբ Զարության տաճարում, եւ այդտեղ էլ նրանց հանգիստ չէին թողնում եւ անգամ լուսամուտներից կրակում էին: Նապոլեոնը կամեցավ եր գրավել Աքրան կամ հին Պաղեստինը, որտեղ ամրացել էր Ջեզար փաշան: Ժանտախտը ֆրանսիացիներին մեծ կորուստ պատճառեց, որոնք դեմ դուրս եկավ օսմանյան Աբուլլահի փաշան: Ֆրանսիացիներին ուժեղ դիմադրեց Աքրան, որին ծովից օգնում էին անգլիացիները: Ֆրանսիական զեկերը գրավում էին եւ հանձնում Ջեզարին: Նապոլեոնն ստիպված եղավ թողնել Աքրայի պաշարումը եւ եկած ճանապարհով ետ նահանջեց: Նա իր զայրույթը թափեց Յուպպեի վրա եւ հունիսի 14-ին Կահիրե մտավ՝ «հաղթական» կերպով: Նապոլեոնը հուլիսի 25-ին Աբուբիրում հաղթեց օսմանյան բանակին, սակայն 1799 թվի օգոստոսի 24-ին գաղտնի հեռացավ Եգիպտոսից՝ Ֆրանսիայում իշխանությանը տի-



րանալու համար, եւ բախտի քմահաճույքին թողեց իր բանակը Եգիպտոսում:

Կիստ ծանրացավ քրիստոնյաների վիճակը Երուսաղեմում, որոնք բոլորն էլ մահմեդականների աջքում իրենց հավատակիցների լրտեսներն էին: Ուստի ամեն միջոց օրինական էին համարում՝ քրիստոնյաներին հալածելու եւ մանավանդ վանքերը կողոպտելու համար: Երուսաղեմը նեղվեց նաեւ արշավող քրիստոնյաներից, որոնք Յուպպեում հայերի տներն ու մթերանոցներն էին այրում, վնասում վանքերը: Զափշտակելուց բացի՝ 100 քսակ դրամի տուգանքի տակ էլ դրեցին հայերին: Երբ Ռամլեի միաբանները փախան Յուպպե, տեղի լեռնցիները հարձակվեցին վանքի վրա, կողոպտեցին ու ավերեցին՝ տանելով անգամ շինությունների երկաթները: Թալանչիները հարձակվեցին նաեւ Երուսաղեմի վանքի վրա, քարուքանդ արեցին Սբ Փրկիչ եկեղեցին, ձիթաստանն ու պարտեզները կտրտեցին: Վանքի բակը դարձրին բանակատեղի եւ ամեն տեսակի վնասներ պատճառեցին: Օսմանյան հրամանատարները պատերազմի ծախսի անվան տակ գումարներ կորզեցին հայկական վանքերից ու քաղաքի հայերից: Պետրոս պատրիարքը այդ ժամանակ մահ էր փափագում՝ երանի տալով մեռածներին: Նա Յուպպե մեկնեց՝ օսմանյան հրամանատար միաջանի Յուսուֆի մոտ, որ գոնե թեթեւացնի վանքից պահանջվող գումարը: Նա Յուպպե հասավ 1800 թվի մայիսի 11-ին, կրած ներդուններից հիվանդացավ եւ հունիսի 1-ին մահացավ: Թաղվեց Յուպպեի հայկական գերեզմանոցում, եւ միայն 1837 թ. նրա ոսկորները տեղափոխվեցին Յուպպեի եկեղեցու գավաթ: Աթոռը թափուր մնաց: Ի պատիվ իրեն՝ պիտի ասել, որ կարողացավ այդ ծանր պայմաններում աթոռի կացությունն անվտանգ պահել:

Իսկ ինչպե՞ս էին հայ կաթոլիկների գործերը: Լիբանանում Կիլիկիայի անունով ստեղծված կաթոլիկությունը խաղաղ օրեր անցկացրեց Բարսեղ Պետրոս Դ Ավագայանի օրոք, որն ընտրվել էր 1788 թվի փետրվարի 5-ին: Նա Աստույան միաբանության անդամ էր եւ հաշտ հարաբերություններ պահպանեց կաթոլիկության եւ միաբանության միջեւ: Նրան հաջորդեց Գրիգոր Պետրոս Ե Զյուլեյյանը, որ Զիլիսից էր եւ 1788 թվի մայիսի 11-ին եպիսկոպոս էր ձեռնադրվել Միջալեյի եւ ես երկու եպիսկոպոսների կողմից, իսկ պապական հաստատություն ստացել էր դեկտեմբերի 15-ին: Նա էլ էր մի որոշ ժամանակ ուսանել Աստույանների մոտ եւ վերջիններիս նկատմամբ հաշտ ընթացք պահպանեց: Պաշտոնավարեց մինչեւ 1812 թվի հունիսի 17-ը: Ընդարձակեց Չմմառի ժառանգավորաց վարժարանը, նորանոր շինություններ կառուցեց: Այնպես որ՝ Չմմառի աշակերտությունը նրան իր հիմնադիրն էր համարում: Լիբանանի աթոռը շատ էր ցանկանում իր իշխանության տակ առնել հռոմեադավան բոլոր հայերին, սակայն ստիպված էր ետ կանգնել իր այդ ծրագրից՝ Զոմմի համառ դիմադրության պատճառով, որը տուրք էր տալիս Կ. Պոլսի լատին եպիսկոպոսների կամքին, որոնք ավելի օգտակար էին համարում իրենց իրավասության տակ ունենալ հայ կաթոլիկներին: Բայց քանի որ հայերի մեջ ուժեղ էր նաեւ հայությունը



պահպանելու մղումը, վերջին ժամանակներում Զոմմ սկսել էր կաթոլիկ եպիսկոպոսի մոտ հայածես եպիսկոպոս նշանակել՝ որպես փոխանորդ (իտալերեն՝ Vicario): Այդ ժամանակ այդ պաշտոնում էր Սահակ Սոֆյայանը, որը 1784-ին հաջորդել էր Աստույան եպիսկոպոսին: Այսպես՝ Կիլիկիայի, Կապադովկիայի, Ասորիքի եւ Միջագետքի հայ կաթոլիկները ենթակա էին Լիբանանի կաթոլիկությանը, իսկ Փոքր Ասիայի, Մեծ Զայքի եւ Կ. Պոլսի հայ կաթոլիկները՝ Կ. Պոլսի լատին եպիսկոպոսին: Փոքր Զայքը բաժանված էր նրանց երկուսի միջեւ: Երկու իրավասությունների մեջ սահմանների հարցում վեճերն անպակաս էին: Բայց դա գոյություն ուներ միայն հայ կաթոլիկների շրջանում եւ ուժ ուներ Զոմմի առաջ, որովհետեւ Օսմանյան պետությունն այդ չէր ճանաչում, եւ բոլոր հայերը համարվում էին Կ. Պոլսի պատրիարքարանի հպատակներ:

Աստույաններն այս միջոցին շարունակում էին իրենց անաղմուկ գործունեությունը՝ հօգուտ հռոմեադավանության: Մամպոտ Պետրոս Երիզադարյան եպիսկոպոսը, որ Աստույան միաբան էր, Աստույանների վանքում իր թեմականների համար վարժարանի մասնաճյուղ ստեղծեց, իսկ Պետրոս Փիրիմյան միաբանը բանակցեց Կ. Պոլսի լատին եպիսկոպոսի հետ, որ նման բան անի կարնեցի տղաների համար: Զոմմի վանքում էլ Աստույան միաբանությունն աշակերտներ էր հասցնում, սակայն այդ ջանքերը տեսական արդյունք չունեցան: Եղիազարյանի ձեռնարկն անձնական ցանկություններից այն կողմ չանցավ եւ 1787-ին նրա մահով իր ավարտը գտավ: Լատին եպիսկոպոսի հետ սկսած գործն իր սկսզբնափուլում էլ մեռավ, իսկ Զոմմի ուսումնական կենտրոնի խնդիրը ձախողվեց՝ ֆրանսիական արշավանքի պատճառով, քանի որ Իտալիան դրա հետեւանքով տակնուվրա եղավ, իսկ Զոմմն էլ վերածվեց ազատ հանրապետության: Զոգեւորականների ինչքը բռնագրավվեց, իսկ նրանք էլ գորակոչվեցին: Չնայած Օսմանյան կայսրությունում, սուլթան Սելիմ Գ-ի բարեհաճությամբ, հռոմեադավանների ունեցվածքը չբռնակրավվեց, սակայն դրամական տուրքերի տակ ընկան, եւ այլ ծախսերի համար գումարներ չմնացին: Զոմմի վանքի եւ նրա ունեցվածքի պաշտպանության գործում կարեւոր եղավ Աբանուս վարդապետ Սարաֆյանի դերը, որը 1795 թվին եպիսկոպոս ձեռնադրվեց եւ 1782-ից մինչեւ 1815 թվիվ Զոմմի վանահայրությունը վարեց: Նա ճկուն ձեռով պայքարեց բոլոր վտանգների դեմ: Վենետիկի եւ Տրիեստի Մխիթարյան միաբանության ճյուղերը նախկինի պես շարունակում էին իրենց գործունեությունը:

Շարունակելի

# ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ 1960-1980-ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ

## ԹԱՏԵՐԳՈՒԹՅՈՒՆ

Սկիզբը՝ 2013-ի թիվ 22-24  
եւ 2014-ի թիվ 1


Մաթեոսյանն ստեղծել է ոչ այնքան դեպքերի շարժը ցուցաբերող գործողությունների, որքան երկխոսությունների միջոցով զարգացող գործողությունների թատրոն: Այլ կերպ՝ խոսքի թատրոն, որը մտավոր խոր տարրություն ունի: Խոսքի հորձանքի մեջ հեղինակն աստիճանաբար ի հայտ է բերում մարդկային ճակատագրի եւ հայրենիքի պատմության տրամաբանական միասնականությունը, որի ներքին շարժումը թելադրված է ե՛ւ ճակատագրի, ե՛ւ պատմության ողբերգականությամբ: Ահա հատվածներ Արծաթաբանյանի մտորումներից. «Ես էլ ճարտարապետ եմ, ականջնիս բամբակ եմ խցկել ու գիտակցաբար - գիտակցաբար՝ իմ գործն եմ անում. ինչ որ կա՝ ես է, ուրիշ տեղ ուրիշ լավ բան չկա, եղածը ես է: Բայց գնացի ամեն կանչի՝ տասնհինգ տարեկան աղջկա նման սիրտս տեղից դուրս է թռչում՝ թե կյանքն ահա հեռվից է անցնում, իսկ ես շարժված եմ մի անկյուն: Ես էլ՝ ես» («Տերը», ժողովածու, 1983, էջ 37):

Նույնն է նաեւ վանքի ծառա Սիմոնի եւ նրա կնոջ՝ Շողերի վիճակը: Սիմոնը, որ նաեւ խաչքար է տաշում, հատկապես իր միջավայրի մարդկանց կողմից չգնահատվող ձիթն է (կրկնվում է Արծաթաբանյանի ճակատագիրը), իսկ Շողերը խորհրդանշում է կյանքի լիահնչյուն ծայր, որի երազանքն ու ներկա վիճակն իրենց հերթին հասունացնում են ողբերգականության մի նոր զգացողություն: Շողերը, իր ամուսնու գլխին կանգնած, այսպես է ասում. «Շողովորդն ապրում է: Տեղից տեղ է գնում, նայում, տեսնում է, գուզվում-գարդարվում, ուտում-խմում է - դու նստել ես ո՛ւ՛ չընկ, չընկ... Կոնսերվի ամանով ջուր ես ծծում ու գոհ ես, ասում ես՝ ապրես: Կոնսերվի ամանով հյուրերին սուրճ տամ՝ կասես, տուր, ինչ կա որ, ծակ չի: Խեղդվում եմ, օդ չկա, խեղդվում եմ, դու ես ինձ խեղդում»:

Հայ ժողովրդի պատմության մեջ իր ողբերգական հետեւանքներով ճակատագրական էր 1915 թվականը, երբ թուրքական կառավարությունը, օգտվելով Առաջին համաշխարհային պատերազմի ընձեռած քաղաքական իրադրությունից, կազմակերպեց մարդկության պատմության մեջ առաջին ցեղասպանությունը՝ բարբարոս միջոց-

ներով ոչնչացնելով մեկուկես միլիոն խաղաղ բնակչություն, ավերելով ամբողջ Արեւմտյան Հայաստանը: Այս մասին հայ գրողները գրել են վեպեր ու պոեմներ, բայց բեմական պատկերումն ուշանում էր:

Ահա այդ բացն են գալիս լրացնելու Պ. Չեյթունցյանի «Մեծ լուրջություն» (1982) եւ «Ողբի, դատարանն է գալիս» (1979) դրամաները: 1915 թ. կազմակերպված սպանողի գոհ գնաց ոչ միայն խաղաղ բնակչությունը, այլեւ արեւմտահայ ամբողջ մտավորական սերունդը: Չեյթունցյանի «Մեծ լուրջություն»-ը նվիրված է այդ գոհեղից մեկին՝ խոշորագույն բանաստեղծ Դանիել Վարուժանին, որին թուրքերը խոշտանգեցին Չանղըրը կոչված վայրում՝ մայրաքաղաքից ոչ հեռու: Բանաստեղծի լուսավոր հանճար եւ անասելի բռնություններ, ժողովրդի կործանում եւ ժողովրդի բանաստեղծի բարոյական նկարագիր, ժողովրդի ու բանաստեղծի ճակատագրի միասնություն. ահա այս ուղեգծերով է զարգանում դրամատիկական պատումը: Վարուժանը երեւում է իր մարդկային ու ստեղծագործական վեհանձն ու առաքինի նկարագրով, երեւում է ամբողջ պատմական միջավայրի համապատկերի հեքիսն՝ բախտակից ունենալով մեծն Կոմիտասին, իր գրչակից Ռուբեն Սեւակին եւ հայ ժողովրդի ամբողջ արեւմտահայ հատվածին: Դրաման ունի պատմականագրական փաստական ամուր հիմք: Փաստական հիմք ունի նաեւ հաշորդ դրաման: Ներկայացված է հայ ժողովրդի ողբերգության կազմակերպչներից մեկի՝ Թալեթի փառալուստ պատմությունը, որը 1921 թ. մարտի 15-ին Բեռլինում իրականացնում է Սողոմոն Թեխլերյանը: Սողոմոնը մարդասպան չէր, բայց Թալեթի պես դահճի սպանությունը դառնում է նրա կյանքի նպատակը, ինչը եւ նրան պիտի վերադարձնել ապրելու իր իրավունքը, մարդկային, քաղաքացիական եւ ազգային իր արժանապատվությունը: Դա այդպես է, որովհետեւ նա ինքնակամ հանդես է գալիս եղեռնի բոլոր գոհերի անունից, որոնց մեջ էին նաեւ իր հարազատները: Կերպարները ցայտուն են ու տպավորիչ: Արյունախում դահիճն իր երկրից հեռու ապրում է ուրիշ անվամբ՝ Թալեթի անվան վրա գրելով Ալի Սալիի բեյ. նա հիմա վախկոտ է ու լռակյաց, անցյալը հանգիստ չի տալիս նրան, բայց եւ մեղքի գիտակցումը հեռու է նրանկան: Սողոմոնը հոգեբանորեն իր մեջ ու՛՛ է գտնում դահճի ճակատին արձակելու արժիճե գնդակը: Դա ամենամեղմ պա-



տիճն էր՝ վիճակված մի ամբողջ ժողովրդի դահճապետին: Սողոմոնն այսպիսի մտորումներով է իրեն նախապատրաստում ճակատագրական քայլին. «Ատելությունը առողջություն է... Օգնական եղիր, Աստված՝ Ուժ տուր ինձ, որ ձեռքս չդողա: Սովորեցրու մինչեւ վերջ ատել: Ատելությունն իմ միակ հավատը դարձրու: Եվ իրավունք տուր ինձ, իրավունք, որ մի մարդ կարողանա մեկ ուրիշ մարդու դատավճիռն արձակել: Ես դա քո անունից եմ անելու»: Այսքանով, սակայն, չի ավարտվում դրաման: Շարունակությունը միջազգային դատավարությունն է, ուր որպես մարդասպանի՝ պիտի դատավճիռ արձակվի Սողոմոնի մասին: Սակայն, արդարության օրենքով, դատավճիռն այս դեպքում եւս ուղղվում է Թալեթի դեմ՝ փաստերով ու վկանների ցուցմունքներով ասպարեզ հանելով նրա ոճրագործությունները, մերկացնելով նրա կանխամտածված չարագործությունների ամբողջ պատկերը: Ահա 1915-ին նրա արձակած հրամաններից մեկը, որ դրամայում զետեղել է հեղինակը. «Հալեալի նահանգապետին: Հայերի իրավունքը՝ ապրել եւ աշխատել թուրքական հողում, լիովին վերացված է: Կառավարությունն իր վրա է վերցնում ամբողջ պատասխանատվությունը եւ հրամայում է չինայել նույնիսկ օրորոցի երեխաներին: Ամեն շաբաթ թվական հաշվետվություն ներկայացնել ձեր գործունեության մասին»: Այս պայմաններում դատավճիռը հոգուտ Սողոմոնի էր: Թատերգության հոգեբանական լարվածությունն իմաստավորվում է անհատի գործունեության այնպիսի դրդապատճառներով, որ հերոս չդառնալու համար ծնված Սողոմոնն իր ապրելու միակ իրավունքը նվաճում է հերոսությամբ:

Շարունակությունը՝ էջ 5



Սկիզբը՝ էջ 3

Ահավասիկ այս ճանապարհին է առավել պատկերավոր երեսան գալիս այն հանգամանքը, որ որտեւ առաքելություն ինքն իրեն չի իրագործվում: Իսկ ամեն ազնիվ պարագայի հիմքը սերն է, ճանապարհը՝ ապաշխարությունը: Ի հակադրություն այս ամենի՝ մարդկանց մեջ, դժբախտաբար, բավական տարածված է իրենց իրավացի լինելու փաստը, եւ հաճախ բացակայում է, բանաստեղծորեն ասած, մի պահ կանգ առնելու, դրսի աչքով ներսը հայելու, ազնիվ զգացումը որտեւ բնագրի հետ չչփոթելու, ցանկության եւ արարքի միջեւ ընկած սահմանը գնահատելու իրողությունը:

Մարդկությանը հայտնի ոչ մի հեղափոխություն ի գորու չի եղել նորոգելու կեցույթի պարզ ու բարդ փոփոխության հիմքում տեղակայված խորհրդավոր ու եղերական աշխարհի շարունակ նվազող ու աղավաղվող ճշմարտության չափաբաժինը՝ զերծ ամեն տեսակի նախապաշարումներից ու տրտմություններից: Հնում շատ

անգամներ հրաշքներ էին հորինվում՝ ապահովելու համար դժբախտությամբ դրոշմված ժամանակի ու միջավայրի նշանակությունը: Սակայն Զրիստոսն անգամ այս՝ ամենից կողմից ընդունված «պարտադիր անիրաժեշտությունը» չի ընդառաջում: Ու չնայած այս աշխարհն իր իմաստությամբ չճանաչեց Աստծուն (տե՛ս Ա Կորնթ. Ա 20, Գ 19), Զրիստոսը երբեւէ չընդառաջեց այն մարդուն կամ հավաքականությանը, որ նշան կամ հրաշք էր ուզում (Մատթ. ԺԲ 39):

Ոչ մի իրադարձություն՝ նույնիսկ ամենաազնիվ մղումներից ծնված, ի գորու չէրավ վերացնելու մարդու՝ ճշմարտությունն ընկալելու չկամությունը եւ վաղվադակի վերավառելու Աստծո պատկերն ու նմանությունը: Որովհետեւ մարդկությանը երբեւէ հայտնի ամենամեծ հրաշքը հենց Աստծո՝ դեպի մարդը գալու իրողությունն է: Եվ ո՞րն է այսօր մարդու պատասխանը:

«... Ի՞նչ ես ուզում Ինձից, ով կին», եւ՝ «... ամեն մարդ նախ ընտիր գինին է մատուցում»: Պարզ

## ԿՐԻՍՏՈՆԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

արտահայտություններ են սրանք: Կարելի է ասել, որ Աստվածաշունչն առկայում է այսօրինակ պատկերներով, բայց որքան չնահանջող խորք կա այս ամենի մեջ, որքան կենդանի ապրում՝ ամեն անգամ յուրահատուկ ու հեռագնա: Մարդկության մի զգալի մասն այսօր էլ, թերեւս, մտածում է, թե հարցն ընդամենը լավ ու տեղին ասված խոսքի մասին է՝ մոռանալով, որ այս հիմքի վրա են կառուցված նաեւ ներկայիս հարաբերությունները: Այլ կերպ ասած՝ սրանք կենդանի, ապրող խոսքեր են, որ մեկ անգամ եւս գալիս են, մի դեպքում, հաստատելու աստվածաշնչյան իրականությունները. այն, որ եղածը կյանքի իսկությունից է, մեկ այլ դեպքում՝ ուղղորդելու, որպեսզի մեր հասկանալիքը շիտակ ընկալվի իրականապես:

Մի առանձին հետեւողությունը ավետարանիչը փոխանցում է եւ այն գաղափարը, համաձայն որի՝ ամեն ոք, ով համակված անկախության մտամոլորությամբ, կմտնի ընդհանուրի համակեցության մեջ՝ առանց հոգու ներքին թելադրանքի եւ վստահությամբ, թե իր առջեւում հավիտենությունն է, դատապարտված է: Որովհետեւ այդ ամենը հակառակ է Զրիստոսի Սուրբ Ավետարանի ոգուն: Ահավասիկ այս պատճառով է նաեւ, որ սբ Պողոսն իր աշակերտ Տիմոթեոսին պատվիրում է մնալ Եփեսոսում, «որպեսզի ոմանք օտար ուսմունքներ չուսուցանեն, որպիսիք պատճառ են լինում վեճերի, բայց չեն ծառայում ... Աստծո ծրագրերին. ուզում են օրենքի վարպետներ լինել. իրենք իսկ չեն իմանում՝ ինչ են խոսում, ոչ էլ հասկա-

նում են այն ամենը, որոնց վրա պնդում են ...»: Եվ այսօր, երբ մարդը «խոսքի կատարելությամբ» նվաճում է օղը, երբ հարաբերապաշտությունն ու ամենաթողությունը կրկին նպատակ ունեն կյանքի կոչելու հին ժամանակների սնտրի հավատալիքները, ամանավանդ քրիստոնեության անվան տակ, մի՞թե կրկին հրաշք է պետք ակնկալել՝ անսալու Բարձրյալին, ներելու համար նմանին, սրբությանը վերաբերելու ինչպես հարկն է եւ կարելորելու ոչ թե ամբողջությամբ, այլ՝ ներքին: Այս է պատմության խորհուրդը, հետեւապես եւ ժամանակի պատգամը մեզ ամենքիս:

Զրիստոսը կերպով, խմեց «մեղավորների» հետ, բազմիցս հրաշագործեց եւ ամեն անգամ թեւաբախվելով հերթական դավճանությունն ու մեղանցումին՝ ներեց՝ որպես առաջին անգամը: Որովհետեւ այսպես՝ ինքնագոհությամբ է, որ վերանում է աշխարհի մեղքը: Որքան էլ որ դիպուկ լինեն մեր անդրադարձները, գուր եւ, եթե արդյունքում մեր նպատակը, ինչպես Կանայի հարսանիքի ժամանակ, մարդկանց հուզավառելը չէ սիրով՝ բխած սուրբ սրտից, բարի խղճմտանքից եւ անկեղծ հավատքից: Մեզ հայող յուրաքանչյուր ոք, երկրի վրա թե երկնքում, գեղեցիկ խոսքերից առավել պետք է տեսնի մեր գործերը, հաղորդակցվի մեր սրտի գանձերին, ներշնչվի մեր լուսառատ գալիքով հաստատագրված գվա՞րթ ներկայով, եւ այս պարագայում է, որ մեզանում հրաշքները կհորդեն, ինչպես աղբյուրները գարնանը, եւ ամեն տեսակի

ինքնակոչն ու օտարամուտը կհասկանան, որ դրախտի հայրենիքում Աստված մշտակա ներկայություն է, իսկ աստվածախիղճ՝ առհավետ մշտանորոգության առիթ: Եվ սա նախ այն պատճառով, որ ազնիվ մղումն արդեն իսկ իմաստությունն է ծնում: Եվ որքան էլ որ «այս աշխարհն իր իմաստությամբ չճանաչեց Աստծուն», միեւնույն է, հրաշքն անշքանցելի իրողությունն է, բայց ո՛չ երբեք նախապայման: Եվ սա՛՛ նկատի ունի ավետարանիչը՝ ասելով. «Զրիստոս այս առաջին նշանն արեց ... որպես սկիզբը նշանների, ... եւ Նրա աշակերտները հավատացին Նրան»: Երբեւէ չի կարելի երեսակայել ծնողափրությունն առանց աստվածափրության, օրինությունը՝ առանց մարդասիրության, հրաշքը՝ առանց հավատի: Այլապես ամեն բան ունայն է, եւ ամենքը՝ դատապարտված:

Մեկ իրողություն կա միայն, որտեղ տերերն ու ծառաները դառնում են եղբայրակիցներ (հմմտ. Փիլիմ. Ա 16): Ամեն անգամ գոհությամբ ճաշակելով հացն ու գինին՝ մենք ամենաուղղակի կերպով հաղորդ ենք դառնում սույն ճշմարտությանը, ինչպես Տիրոջ այն սպասավորները, որոնք Կանայի հարսանիքի ժամանակ, իրենց կամքից անկախ եւ առանց որեւէ հրաշքի ակնկալության, սկզբից եւեթ իմացան, թե որտեղից է գինին...

«Շնորհ, ողորմութիւն, խաղաղութիւն Տեառն մերոյ Յիսուսի Զրիստոսի եղիցին ընդ ամենեսեանս»: Ամեն:

Իսահակ վրդ. ՊՈՂՈՍՅԱՆ

# ԿԵՆԱՑ ԽՈՍՔԸ...

**Ա**ստվածաշունչը քրիստոնյաների նվիրական և սրբազան Գիրքն է՝ Աստծո կենաց խոսքը, Նրա խոստումների, պատվիրանների, օրենքների, կամքի, գործերի և փրկչական ծրագրի ամբողջությունը: Սուրբ Գիրքը գրվել է Աստծո շնչով, այսինքն՝ աստվածային ծագում ունի, որն էլ պայմանավորում է Նրա անառարկելի հեղինակությունը, տարբերությունը մյուս բոլոր գրքերից և հարատևությունը: «Երկինք և երկիր պիտի անցնեն, բայց իմ խոսքերը չպիտի անցնեն» (Մատթ. ԻԴ 35): Աստվածաշունչ Գրքերը շնորհվել են մարդկությանը Սուրբ Յոզեֆ Ներշնչանքով և Տիրոջ կողմից ընտրված շուրջ 40 մատենագիր մարգարեների, ավետարանիչների և առաքյալների ձեռամբ, որպեսզի «բոլոր մարդիկ փրկվեն և հասնեն ճշմարտության գիտությանը» (Ա Տիմ. Բ 4): Սուրբ Գիրքը պատմում է Տիրոջ և մարդու փոխհարաբերությունների մասին, բացահայտում Աստծուն (աստվածությունը, մշտնջենավորությունը, գորությունը, սրբությունը, հավատարմությունը, սերը), հայտնում երկնային Յոր կամքը: «Աստվածաշունչ»-ը՝ իբրև հատուկ անուն, բնորոշ է միայն հայերին և փոխառված է Նոր Կտակարանից, որտեղ Պողոս առաքյալն ասում է. «Աստծու շնչով գրված ամեն գիրք...» (Բ Տիմ. Գ 16): Գիրք գրողի մասին բազմաթիվ աշխատություններ են գրվել, իրենց հիացմունքն են արտահայտել աշխարհի մեծագույն գիտնականները, արվեստագետները, քաղաքական գործիչները: Օրինակ՝ իտալացի նշանավոր ֆիզիկոս, փիլիսոփա, աստղագետ Գալիլեո Գալիլեյը գրում է. «Սուրբ Գիրքը երբեք չի կարող կրել մոլորություն: Ինչպես բնությունը, այնպես է Սուրբ Գիրքը ստեղծված է աստվածային խոսքով: Սուրբ Գիրքը Սուրբ Յոզեֆ Ներշնչումն է, իսկ բնությունը՝ աստվածային հորդորով: Սուրբ Գիրքը չի կարող սխալվել, որովհետև հաճախ այն ոչ միայն թույլատրում է, այլև պահանջում է մեկնաբանություն»: Իսկ ԱՄՆ-ի 16-րդ նախագահ, հայտնի հասարակական-քաղաքական գործիչ Աբրահամ Լինքոլնն ի-



րավամբ նկատում է. «Ես հավատում եմ, որ Սուրբ Գիրքն ամենալավ պարզեցն է Աստծուց մարդուն: Ամեն հրաշալի երեւոյթ Փրկչից մեզ հասել է այդ Սուրբ Գրքի շնորհով: Առանց դրա՝ մենք չէինք կարող տարբերել ճիշտը սխալից»: Ռուս գիտնական, քիմիկոս Դմիտրի Մենդելեևը Սուրբ Գիրքը բնութագրում է այսպես. «Սուրբ Գիրքը հոգեւոր ջրատար է, երբեք չչորացող, որը հագեցնում է հոգեւոր քաղցը միլիոնավոր մարդկանց, որոնք ապրել են մինչ մեզ, ապրում են ու դեռ դարեր շարունակ պիտի ապրեն»: Ականավոր քիմիկոս Բոյլը, չթաքցնելով իր հիացմունքը, գրում է. «Աստվածաշնչի համեմատ մարդկային բոլոր գրքերը, նույնիսկ կոթողայինները, լոկ մոլորակներ են, որոնք իրենց բովանդակ լույսն ու փայլն ստանում են արեգակից» (Ի. քին. Ժիլով, ԻՆչ են ասում նշանավոր մարդիկ Աստվածաշնչի մասին, թարգմ. Գ. Դարբինյանի, Ա. Ավետիսյանի, Ս. Էջմիածին, 2003): Բնախույզ Ֆարադեյը (1791-1867) «Արցունքի քիմիական անալիզը» թեմայով դասախոսության

ծամանակ ընդգծում է, որ ինչպես արցունքներն են բխում սրտից և ուղղվում դեպի սիրտ, այնպես է Սուրբ Գիրքը բխում է Աստծուց, և ով Աստծուց է, լույս է Նրա խոսքը: Աստվածաշունչը Տիրոջ մեծագույն պարզեցն է մեղսագործ մարդկությանը. այս գիրքը կարողավ՝ կարող ենք ճանաչել ճշմարտությունը և գտնել փրկության ուղին: Փորձենք ներկայացնել, թե ինչպես է բնութագրվում Աստծո կենաց խոսքը Սուրբ Գրքում.

**ա.** Աստվածային խոսքը նման է հայելու, «քանի որ, եթե մեկը լսող լինի խոսքը և ոչ կատարող, նա նման է մի մարդու, որ ակնապիշ դիտում է հայելու մեջ իր բնական դեմքը: Նայելով՝ տեսնում է ինքն իրեն, անցնում գնում է և անմիջապես մոռանում, թե ինչպիսին էր ինքը: Իսկ ով աչքերը հառած նայում է ազատության կատարյալ օրենքին և դրա մեջ էլ հարատևում, նա լույս է, չի մոռանում, այլ այն կատարում է. այդպիսի մեկն իր արածի մեջ երանություն կգտնի» (Յակ. Ա 23-25): Աստվածաշունչը հայելի է, որը ցույց է տալիս մեր իրական էությունը.

Սուրբ Յոզեֆ Ներշնչում է ոչ միայն Նայել այդ հայելուն, այլ գղջալ և ապաշխարել մեղքերի համար, փոխվել և քայլել Աստծո ուղիներով: Քրիստոնյան կարող է օրհնության և շնորհների արժանանալ, եթե կարդում է Սուրբ Գիրքը, պահպանում Տիրոջ պատվիրանները, լույս է ընկալում Նրա խոսքը: Այսինքն՝ ճշմարտ հավատացյալը պետք է այդ մեծագույն խոսքը կյանքով իրագործի:

**բ.** Տիրոջ խոսքը համեմատվում է սրի հետ. «Կենդանի է Աստծու խոսքը, ազդու և ավելի հատու, քան ամեն մի երկասարի սուր. և կտրում անցնում է մինչև ոգու և հոգու, հողերի և ողնածուծի բաժանման սահմանը. նա քննում է սրտի մտածումներն ու խորհուրդները» (Եբր. Դ 12): Սուրբ Գիրքը երկասարի սուր է, որը նկատում է թրատում է մարդկային արատավոր մեղքերը: Երբեմն մեղքերի բազմությունից մեր հոգում «խոցեր» են առաջանում, որոնք ի վիճակի չենք բուժելու առանց Աստծո օգնության, քանզի ինչպես Ղուկաս ավետարանիչն է ասում. «Ինչ որ անհնար է մարդկանց համար, Աստծու համար հնարավոր է» (Ղուկ. ԺԸ 27). ամենագոր Տիրոջ համար անհնարին ոչինչ չկա:

**գ.** Աստվածային խոսքն ուղղորդող լուսատու է՝ տեսանելի միայն նրանց, որոնք աներեր հավատ ունեն և ցանկանում են հետևել այդ լույսին. «Ըն խոսքը ճրագ է իմ ոտքերի համար, և լուսավորում է իմ շավիղները» (Սաղմ. ԺԺԸ 105): Եթե խոսարհաբար և հնազանդորեն հետևենք աստվածային խոսքի լույսին, չխտորվենք ճշմարտ ուղուց և դուրս գանք մեղքերի գարշահոտ ճահճուտից, կհասնենք երանավետ և օրհնառատ նավահանգստին: «Լսեցե՛ք, ունկնդիր եղե՛ք և մի՛ հպարտացե՛ք, քանզի Տերը խոսեց: Ձեր Տեր Աստծուն փառք տվե՛ք, քանի դեռ խավարը չի պատել, և ձեր ոտքերը խավար լեռների վրա չեն սայթաքել: Լույս պիտի ակնկալեք, իսկ այնտեղ մահվան ստվերներ են. ձեզ դնելու են խավարի մեջ: Եվ եթե չլսեք Նրան...» (Եբրեմ. ԺԳ 15-17): Տիրոջ խոսքն է լուսավորում մեր ճանապարհը, և այդ լույսին պետք է հետևել անսասան հավատով և անսկզբ վստահությամբ:

Շարունակությունը՝ էջ 7

## ՉԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ 1960-1980-ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ

*Սկիզբը՝ էջ 4*


1960-1980-ական թթ. հայ թատերգության մեջ լայն տեղ նվաճեց **պատմահեղափոխական** նյութը: Նախնինում են այն երբեք աչքաթող չէր արվել (հիշենք Ե. Չարենցի «Կապկաթ թամաշան», Գ. Բոբյանի «Նույն հարկի տակ», Ա. Արաքսյանի «Վարդեր և արյուն» գործերը): Այս տարիներին այդ հարցադրումն ընդարձակում է իր ընդգրկման սահմանները՝ նյութ ունենալով 19-րդ դարի հեղափոխական-դեմոկրատների գործունեությունը, խորհրդայնացման տարիների իրադարձությունները և պետական-կուսակցական գործիչների կյանքը:

**Ա. Արաքսյանի** «Յուսիսային տեսիլներ» դրաման (գեներված է «Յրդեհ» ժողովածուի մեջ, 1984) նվիրված է Միքայել Նալբանդյանի կյանքի ամենածանր օրերին, երբ նա բանտարկված էր Պետրոպոլիսյան ամրոցում: Դեպքերի մեջ են ներքաշվում Ս. Նազարյանը, Ա. Սուլթանյանը, Ն. Գ. Չերնիշենսկին, Ա. Ա. Չափյին, երեւում է Ալեքսանդր Երկրորդ ինքնակալը: Նալբանդյանի կերպարին թե՛ իր արձակ և թե՛ դրամատիկական երկերում հեղինակը մեկ անգամ չէ, որ անդրադարձել է: Նալբանդյանի կերպարը պատկերող նրա գրեթե բոլոր երկերին, ինչպես նաև վերոհիշյալ դրամային բնորոշ է ազատության գաղափարի և այն ճշշող ուժի բացահայտ պայքարը: Այդ բախումն էլ ընթացք է տալիս դեպքերին: Պատմական-

սագրական հավաստի իրադարձությունների ոլորտում Նալբանդյանը պատկերվում է տեսական հարցաքննությունների մեջ: Մխրանքի ու հերոսացման լուսապսակով երբեմն միայն ընկերների, հարազատների միջավայրում ոգեկոչվում են նրա ազատության օրերը: Այս հակադրության մեջ էլ ուժգնանում է բախումը. քննիչը նրան համարում է թշնամի և դատապարտում ցմահ աքսորի, քանի որ ազատության գինը ինքնակալությունը մեծահոգաբար կարող էր հանդուրժել միայն շղթաների մեջ:

Յայաստանի խորհրդայնացման պատմական իրադարձությունների ուրվագծումով հեղափոխության գործիչների կերպարներ կերտեց **Գ. Դարբինյանը**: Այդ դրամաները նա ի մի է բերել «Յրդեհի» ժողովածուի մեջ: Սուրեն Սպարդարյանի կյանքի պատկերման է նվիրված «Որդու ճանապարհը» (1956) երկը: Իսկ չեկոստ Գեորգ Աթաբեկյանի 1920 թ. գործունեության մի դրվագն է արտացոլում «Որոգայթ և սեր» դրաման: Սրանց մեջ համեմատաբար հաճախված է «Յանրապետության նախագահը» (1970) գործը: Պատկերված է Ա. Մյասնիկյանի գործունեությունը նոր-նոր կազմավորվող Խորհրդային Յայաստանում, որը քայքայված տնտեսության ու գաղթականության միակ ուղեկիցները սովն ու համաճարակն էին: Կերտված է հեղափոխության առաջնորդի կերպարը, որի ցու-

ցումով էլ Մոսկվայի քաղկոմի քարտուղար Մյասնիկյանը 1921-ի ամռանը գալիս է Յայաստան և ստանձնում նորաստեղծ հանրապետության ղեկավարությունը: Գործողությունների մեջ երեւում է նաև Զ. Թումանյանը՝ ամենայն հայոց բանաստեղծը, որը հանրապետության երիտասարդ ղեկավարին հորդորում է վերջ տալ ժողովրդին թշնամացող երկպառակություններին, վերածնվող հայրենիքում համախմբել մտավորականությանը, գորղեներին ու մշակույթի գործիչներին, տեր կանգնել գաղթականությանն ու որբերին: Իսկ Մյասնիկյանը հեռատես գործիչ էր ե գիտեր, որ երկիրը երկիր է դառնում առաջին հերթին նրա մարդկանցով և Յայաստանի հրավիրեց Մ. Սարյանին, Ա. Թամանյանին, Ա. Սպենդիարյանին, Ռ. Մելիքյանին և ուրիշներին: Ահա այս մտահոգությունների մեջ է ուրվագծվում հանրապետության նախագահի կերպարը: Յեղինակը փորձել է չհամահարթել ժամանակի դժվարություններն ու սխալները: Դա ակնհայտ է հերոսներից մեկի գրույցի մեջ: Խոսելով արտասահման արտաքսված մասնագետների մասին՝ այդ հերոսն ասում է, որ նրանց եկան փոխարինելու նախկին կարմիրգվարդիականները, որոնք մեծ ծառայություն ունեն հեղափոխությանը, և ապա, խոսքը որոշակիացնելով նրանցից մեկի մասին, շարունակում է. «Բայց գործարանից զլուխ չի հանում: Խոսում են նրա հետ արտադրության



հարցերից, իսկ նա հորանջում է կամ հերթական միտիկում իր ասելիք ճառի կոնսպեկտն է կազմում: Գրասեղանը տեխնիկական ձեռնարկներից մաքրեց, վրան քաղաքական գրքեր դարսեց: Արտադրական առաջադրանքը չկատարող ցեխերի պետերին ստիպում է կարդալ Մարքսի «Կապիտալը» և քաղվածքներ անգիր անել: Այնուհետև նույն հերոսը եզրակացնում է. «Ես ռուս մարդ եմ և եմ ուզում, որ փուկ գա Ռուսաստանը» («Յանրապետության նախագահը», ժողովածու, էջ 178-179):

Ահա այսպիսի է դեռ ավելի վատթար վիճակ էր տիրում Յայաստանում, ուր իր գործունեությունն էր ծավալել Ա. Մյասնիկյանը: Նրա այս շրջանի կյանքի մի դրվագն է արտացոլում նաև **Գ. Բեսի** «Յափնջավորները» (1968) դրամատիկ պատկերը:

Շարունակությունը՝ էջ 8

# ԼԵՉՎԱՐՏԱՆԱՅՑՉԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ Խ. ԱՐՈՎՅԱՆԻ «ՎԵՐՔ ՆԱՅԱՍՏԱՆԻ» ՎԵՊԻ «ՉԱՆԳԻ» ՆԱՎԵԼՎԱԾՈՒՄ

Սկիզբը՝ 2013-ի թիվ 24 եւ 2014-ի թիվ 1

Արժանացնելով «Չանգի» չափաձու հատվածները գրել է շրջադասությունների կիրառմամբ, որոնք գեղարվեստական ու բանաստեղծական երանգներ են հաղորդում խոսքին, օրինակ՝ «թո՛ղ ծոց քո ցնծալից, թո՛ղ դաշտ քո զուարճալից ուռնասցի՛ն, ծաղկասցի՛ն... զայս դաշտ երկնատիպ, դաշտավայր չքնադաղ՛մ...», կամ՝ «թախիճք հոգետանջք», «կրկեսք երկնահրոսք», «տաճարք պանծալիք», «շէնք զուարճալիք» եւ այլն: Այս հատվածը հարուստ է նաեւ դարձվածքներով, որոնք ավելի անմիջական ու սրտամոտ են դարձնում խոսքը, օրինակ՝ ականջով ընկնել, «սիրտը չկտրել», «սիրտը չտրորել», «աչքը լիս», «երկինք գնալ», «աստղը ծովել» եւ այլն: Կան նաեւ դարձվածներ, որոնք չափազանցությունների օրինակ են, ինչպես՝ «մութն էնպես էր գետինն առել, մատդ կոխեիր մարդի աչքը, չէր իմանալ», կամ՝ «լեզվին սարն էլ չի դիմանալ» եւ այլն:

Ուշագրավ է նաեւ այն հանգամանքը, որ Արժանացնելով «Չանգի» հավելվածը փաստորեն վերջացնում է գրաբարով: Սա յուրօրինակ հակահարված էր բոլոր նրանց, ովքեր մեղադրում ու հալածում էին Արժանացնելով վեպը՝ աշխարհաբար լեզվի նոր հնարավորությունները: Յուրաքանչյուր, որ հրաշալիորեն տիրապետում է գրաբարին, սակայն չի գրում այդ լեզվով, քանի որ այն անհասկանալի է լայն զանգվածների համար:

Չգոր պաթոսով գրված այս հատվածն Արժանացնելով ստեղծագործության ողջ համակարգում առանձնանում է իր յուրահատկությամբ: Մի կողմից՝ դրսևորելով հեղինակի գեղարվեստական մտածողության աննախադեպ մակարդակը, մյուս կողմից՝ աշխարհաբար լեզվի նոր հնարավորությունները: Յուրաքանչյուր, որ հրաշալիորեն տիրապետում է գրաբարին, սակայն չի գրում այդ լեզվով, քանի որ այն անհասկանալի է լայն զանգվածների համար:

Չգոր պաթոսով գրված այս հատվածն Արժանացնելով ստեղծագործության ողջ համակարգում առանձնանում է իր յուրահատկությամբ: Մի կողմից՝ դրսևորելով հեղինակի գեղարվեստական մտածողության աննախադեպ մակարդակը, մյուս կողմից՝ աշխարհաբար լեզվի նոր հնարավորությունները: Յուրաքանչյուր, որ հրաշալիորեն տիրապետում է գրաբարին, սակայն չի գրում այդ լեզվով, քանի որ այն անհասկանալի է լայն զանգվածների համար:

ված»,- գրել է Նշան Մուրադյանը: Եվ, իրոք, դժվար է շրջաժան անցկացնել վեպի նախնական (այսինքն՝ երբ դեռ չկար այս գլուխը - Ա. Ա.) եւ վերջնական օրինակների միջեւ, սակայն նկատելի է եւ այն, որ Արժանացնելով գրիչն այս հատվածում ու հատկապես նրա առաջին հինգ էջերում շատ ավելի բուռն ընթացք է ստացել, կատարելության հասել, դարձել ավելի հատուկ, պատկերավորման միջոցները՝ տարաբնույթ: Այդ բազմազանության վառ օրինակներից են հավելվածի առաջին եւ երկրորդ ենթագլուխներում հեղինակի դրսևորած լեզվական հարուստ մտածողությունն ու բառօգտագործումները: Եթե առաջինում Արժանացնելով օգտագործում է հատուկ արտահայտչաձևեր, ապա երկրորդում, որտեղ պատկերվում են Քանաքեռի Սբ Մարիամ Աստվածածնի եկեղեցում՝ Աղասու գերեզմանի վրա, Նազուկի մահը եւ նրանց երեխաների սուգը, գրողի գրիչը դառնում է գեղուն ու քնարական:

«Չանգի» հավելվածը գաղափարադրույթի առումով խիստ ուշագրավ կառուցվածք ունի, ինչը եւ պայմանավորել է լեզվական բառապաշարն ու պատկերային համակարգը: Խոսքը վերաբերում է այդ հատվածի առաջին եւ երրորդ բաժիններին, որոնք կառուցված են հակադրույթի սկզբունքով: Եթե առաջինում Չանգի գեղարվեստագրվում է որպես քանդակ, տապալուր, ապա երրորդ բաժնում՝ որպես ծաղկագարդ, քաղցրահամ, զովարար, ոսկեհունք, ծաղկածին եւ այլն: «Չանգի»-ի կառուցվածքային յուրահատկությունն Արժանացնելովին հնարավորություն է տվել եւ արձակ, եւ չափաձու խոսքով իր սրտի բոլոր հույզերն ու ապրումները, ապագայի կանխատեսումներն արտահայտել: Այս գլխի առաջին հատվածում Արժանացնելով իր մտորումներն արտահայտում է աշխարհաբարով, գործածում է հիմնականում խոսակցական բառեր ու արտահայտություններ, ինչպես՝ «ես հաղաղին, որ աստված ոչ շահնք տա, մեկ անծանոթ անցավոր որ Կոնդի դուզը չի նի ըլում յա Ապրանքափոսիցը վեր գալիս, որ Չանգի վրովն անց կենա, աչքը շաղվում ա, գլուխը շվարում,



ու հենց իմանում ա, թե մեկ ահագին սարվրեն փուլ եկավ»: Այստեղ հանդիպում ենք նաեւ բազմաթիվ բարբառային բառերի, օրինակ՝ «դրոլու», «բողա», «դարավուլ», «թոգ», «շահնք տալ», «ուղուր» եւ այլն: Դժվար է հավատալ, որ հենց նույն գլխում հանդիպում ենք գրաբարով գրված հիանալի հատվածների, օրինակ՝ «Քանի՛ցս, քանի՛ցս կանգնեալ ի վերայ ահեղատեսիլ քարաժայռից քոց, խայտալով ի ծաղկանկար, երփներանգ ծոց քո հրաշագեղ, մինչ տղայն էի, խնդայի, խաղայի, ցնծայի...»: Լեզվական այս իրողությունն ուշագրավ է նրանով, որ ողջ վեպի ընթացքում Արժանացնելով միայն չափաձու հատվածներում է գրաբարն օգտագործել: Մինչդեռ այս գլխում նա դա անում է նաեւ արձակ հատվածներում: Հանդիպում են նաեւ բազմաթիվ դիպվածային բառեր, օրինակ՝ «մեծագն», «քաղցրամոք», «երկնալից», «քաջակուռ», «գորովագուր», «աշխարհակառույց» եւ այլն: Արժանացնելով խոսակցական ու բարբառային լեզուն հղկել է, մաքրել, նրան հաղորդել գրական ձև ու տեսք, այն արվեստի մակարդակի բարձրացրել: Այսուհանդերձ չի կարելի ասել, որ Արժանացնելով լեզուն կատարյալ է: Ինքը՝ Արժանացնելով, ինչպես վեպի շարադրանքում, այնպես էլ այս գլ-

խում դժգոհում է իր «անախտան լեզվից»՝ երանի տալով «էն սիաթին, որ մեկ ազնիվ հայի ծնունդ...» նորեն էնպես գրի մեր քաջ հայերի պատմությունը, որ լսող ու կարդացող վառվի, բորբոքվի, զարմանա, հիանա»:

«Չանգի» գլխում Արժանացնելով սահուն կերպով արձակից անցել է չափաձույի, եւ հեղինակային ցասունալից խոսքն աստիճանաբար փոխվել է լիրիկայի: Չափաձու հատվածներն արդթթի են նմանվում բողբոջ վերածվելով խնդրանքի, հույսի, անհուն հավատի առ ապագան, եւ թերեւս այդ պատճառով է նաեւ, որ Արժանացնելով «Չանգին» ավարտել է չափաձու գրաբարով:

«Ռուսական տիրապետութենն առաջ՝ մահմետական լուծի տակ ճգմուած, խեղդուած, գահանդած, սահմուկած Հայու-թեան սարսափահար ու ցաւագին հոգին է որ կը պատկերանայ անոր առաջին մասին մէջ՝ սարսեցուցիչ զօրութեամբ մը ներշնչման եւ մրկածեւ ուժով մը արտայայտութեան: Երկրորդ մասը կ'ոգէ հին ազատ օրերու փառաւոր, միխթարիչ ու վերանորոգիչ յիշատակը՝ ներկային աղջամուղջին մէջ ծիածանի մը պես յանկարծ մշուշող, եւ վերջին մասը կը փառաբանէ ռուսական զօրութեան գալուստը՝ իբրեւ փրկութեան առաւօտին ծագումը»,- գրել է Արշակ Չոպանյանը «Չանգի»-ի մասին: Ու թեւեւ Չոպանյանն ընդհանրության մէջ ճիշտ է գնահատում այս գլխի կառուցվածքային ու բովանդակային պարունակությունը, սակայն այս գլխի բուն արժեքը միայն դա չէ, այլեւ այն, որ Արժանացնելով հիմնադիր ու նորարար էր՝ ազգային, մշակութային անցնելիք ճանապարհի ու լեզվական զարգացման ընթացքի: Այս առումով կարելի է ասել, որ Արժանացնելով արեւ այն, ինչ արել էին իրենից առաջ Մաշտոցն ու Խորենացին՝ ազգային, քաղաքական ու մշակութային կործանման նախաշեմին ստեղծելով ազգափրկիչ գիր, պատմագրություն, գրականություն ու լեզվամտածողություն: Արժանացնելով բուն մեծությունը լավ է բնութագրել մեր գրականության նշանավոր դեմքերից մեկը՝ Կոստան Չոպանյանը: Խոսելով մեծ լուսավորչի մասին, որին նա անվանել է իդեալամարդ, գրել է, որ Արժանացնելով «ապրել ուզող ժողովրդի հսկայական կանչն է»:

ԱՍԻ ԱՍՍՏՐՅԱՆ

## Սրբադասման եւ Ծիսական հանձնախմբերի հանդիպումը Անթիլիասում

Հունվարի 27-29-ը Անթիլիասի Մայրավանքում Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Մայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի եւ Ն. Ս. Օ. Տ. Տ. Արամ Ա Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսի օրինությամբ տեղի ունեցավ Հայաստանյայց Առաքելական Սբ

նությունը եւ գնահատանքը հանձնախմբի կատարած աշխատանքների համար:

Ժողովն սկսվեց միասնական Տերունական աղոթքով, եւ «Հոգւոց» արտասանվեց Տեղասպանության նահատակների հոգիների խաղաղության համար: Ժողո-

ջապահյանը, Բագրատ եպս Գալստայանը, Անուշավան եպս Դանիելյանը, Բաբկեն եպս Չարյանը, Վահան եպս Հովհաննիսյանը, Չաքարիա վրդ. Բաղումյանը եւ Վահրիճ արքեպ Ղարախանյանը:

Հանդիպման ընթացքում քննարկվեցին եւ որոշումներ կայացվեցին սրբադասման պայմանների, կարգի, Տեղասպանության նահատակներին նվիրված շարականի կանոնի, ծիսական հիշատակության կարգի եւ թվականի, նրանց մատուցների եւ սրբապատկերի պատրաստման վերաբերյալ: Ժողովը հստակեցրեց նաեւ աշխատանքների կատարման ժամանակացույցը՝ 2015 թ. սրբադասման ամբողջ գործընթացն ավարտին հասցնելու համար: Այս ուղղությամբ տրվեցին համապատասխան հանձնարարականներ:

Սրբադասման հանձնախմբի հաջորդ հանդիպումը տեղի կունենա մայիսի 25-30-ը՝ Մայր Աթոռ Սբ Էջմիածնում:

Իսկ հունվարի 29-30-ը տեղի ունեցավ Հայաստանյայց Առաքելական Սբ Եկեղեցու ծիսական հանձնախմբի հանդիպումը, որին մասնակցում էին Կոմիտաս



արք. Օհանյանը (համաատենապետ), Արշակ եպս Խաչատրյանը (համատենապետ), Վարուժան արք. Հրեկելյանը, Սեպուհ արք. Սարգսյանը, Գեղամ արք. Խաչեռյանը, Միքայել եպս Աջապահյանը, Վահան եպս Հովհաննիսյանը եւ Չաքարիա վրդ. Բաղումյանը:

Հանդիպման ընթացքում հանձնախմբը, հիմք ընդունելով 2013 թ. Մայր Աթոռ Սբ Էջմիածնում գումարված Եպիսկոպոսաց ժողովի որոշումները, քննարկեց եւ վերջնական տեսքի բերեց սուրբ Մկրտության խոր-

իրդակատարության բնագիրը եւ կանոնական ուղեցույցը: Մասնավոր քննության առկվեց նաեւ ծիսական լեզվի խնդիրը: Սբ մկրտության նախապատրաստության ուսուցման ձեռնարկի առկայությամբ հանձնախումբը որոշեց շարունակել լրամշակման աշխատանքները՝ վերջնաժամկետ սահմանելով մայիս ամիսը:

Ծիսական հանձնախմբի հաջորդ հանդիպումը տեղի կունենա մայիսի 19-23-ը Մայր Աթոռ Սբ Էջմիածնում:



Եկեղեցու սրբադասման հանձնախմբի հանդիպումը: Ժողովից առաջ Սրբադասման հանձնախմբի անդամները հանդիպեցին Արամ Ա Վեհափառի հետ՝ ստանալով նրա հայրական օրի-

վին մասնակցում էին Սեպուհ արք. Սարգսյանը (համատենապետ), Արշակ եպս Խաչատրյանը (համատենապետ), Վարուժան արք. Հրեկելյանը, Սեպուհ արք. Սարգսյանը, Միքայել եպս Ա-

Սկզբը՝ էջ 5

# ԿԵՆԱՑ ԽՈՍՔԸ...

դ. Արարչագործ խոսքն անշեջ կրակ է, որը համակում է արդարներին եւ նվիրյալներին՝ այրելով մեղքերի մոլախոտը. «Ես ասացի. «Չեմ տա Տիրոջ անունը, այլևս չեմ խոսի Նրա անունից»։ Սակայն իմ սրտում կարծես կրակ վառվեց, բորբոքվեց ոսկորներս մեջ, ու ես ամեն կողմից լքված մնացի, չկարողացա հանդարտվել» (Երեմ. Ի 9)։ Ոչինչ եւ ոչ ոք չի կարող մարել այս կրակը, քանզի այն Տիրոջից է՝ մաքրագործող եւ սրբացնող։

ե. Աստվածաշունչը նման է մուրճի, որը կարող է փշրել այն սրտերը, որոնք քարացել են արատավոր մեղքերի ծանրությունից. «Իմ խոսքերն արդյոք կրակի նման չե՞ն կամ մուրճի, որ քար է կտրում» (Երեմ. ԻԳ 29)։ Աստվածային խոսքը կարող է փշրել նախանձից եւ չարագործություններից գոյացած լեռները, հնազանդեցնել մեղսագործներին, կերտել ճշմարիտ քրիստոնյայի նկարագիր։ Ծշմարտապես Աստծո կամքը փնտրող քրիստոնյան պետք է մի կողմ դնի սեփական մտածումներն ու կարծիքները, տրվի Աստծո խոսքի հավատարիմ սերտմանը եւ իրագործմանը։

գ. Տիրոջ խոսքը հոգեւոր սնունդ է և նորադարձ քրիստոնյաների համար. «Իբրեւ մանուկներ ի Քրիստոս կաթ սովեցի ձեզ եւ ոչ՝ կերակուր, քանի որ դեռ կարող էլ չէիք...» (Ա Կորնթ. Գ 2)։ Այս կենսատու խոսքով ենք սնվում մենք՝ քրիստոնյաներս՝ աստվածային փր-

կագործությանը հաղորդակից դառնալով. «Ապա ուրեմն հավատը լավածից է, եւ լավածը՝ Քրիստոսի խոսքից» (Յոհ. Ժ 17)։ Սնվելով աստվածային խոսքով՝ ձեռք ենք բերում աներեր հավատ, վստահություն, խոնարհություն, հնազանդություն՝ գտնելով մեղքերի ճահճուտից հեռացնող ծաղկավետ արահետը։

ե. Աստվածաշունչը ընթերցողը պետք է գինվի լրջմիտ ուշիմությամբ, խորագգացությամբ, երկյուղածությամբ կանգնի Աստծո առաջ եւ իր սրտում ընդունի Նրա խոսքի սերմերը։ «Վերածնվեցե՛ք ոչ թե ապականության երթակա սերմից, այլ՝ անապականից՝ Աստծու կենդանի եւ մշտնջենական խոսքով» (Ա Պետ. Ա 23)։ Տիրոջ խոսքը սերմ է, որն ընկնում է մեր սրտերը, ծլարձակում եւ մեզ նախապատրաստում նոր՝ առ Աստված կյանքի։ Երբ այդ սերմն ընկնում է պարարտ հողի մեջ, անշուշտ, բերք է տալիս. «Իսկ այն, որ պարարտ հողի վրա է, նրանք են, որ բարի եւ զվարթագին սրտով լսելով խոսքը՝ ընդունում են այն եւ հարատեւելով պտուղ են տալիս» (Ղուկ. Ը 15)։

Եկեղեցին ինքնակամ մեկնություն չի տալիս Աստծո խոսքին, այլ այդ խոսքի անմիջական ժառանգորդն է, ժառանգորդ, որ աստվածային ճշմար-



Շուրիշկանի Սր Ավետարանը

տություններն ստացել է առաքյալներից՝ Տիրոջ աշակերտներից։

«Ինչպես որ, ասենք, երբ անձրեւ կամ ձյուն է իջնում երկնքից եւ կրկին այնտեղ չի վերադառնում, քանի դեռ չի ոռոգել երկիրը, չի ծլեցրել ու պտղաբերել այն, սերմանողին սերմ եւ ուտելու հաց չի տվել, այդպես էլ պիտի լինի իմ խոսքը, որ ելնում է իմ բերանից. նա դատարկ չի վերադառնալու, մինչեւ որ չկատարի այն, ինչ կամենում եմ ես» (Ես. ԾԵ 10-11)։

Եկեղեցու նշանավոր հայրերը Սուրբ Գրքի աստվածային խոսքի ամենօրյա ընթերցումը

համարել են կենսական անհրաժեշտություն։ Երբ Աստվածաշունչն ընթերցում ենք հավատով, Սուրբ Գրքու կենդանի ներգործությունն առավել է ամրացնում մեր հավատը՝ մաքրագործվելու եւ քրիստոնյայի նկարագիր ունենալու ճգտում առաջացնելով։ Սուրբ Գրքի ընթերցանությամբ հաղորդվելով Փրկչին՝ մեր սրտում անտեսանելիորեն դրոշմվում են հոգեւոր առաքինությունները, որոնք լուսարձակում էին Տիրոջ մեջ։

Սուրբ հայրերն ուսուցանում էին, որ Աստվածաշունչը ընթերցանությունը պետք է տարբերվի սովորական ընթերցանու-

թյունից. հոգեւոր ընթերցանությունը ոչ թե գիտելիք ձեռք բերելու պարզ ընթացք է, այլ՝ կենդանի գրույց Աստծո հետ, Նրա խոսքի ունկնդրում։ Տիրոջ խոսքը հասկանալու համար պետք է «լսելու ականջ» ունենալ, այսինքն՝ կարողանալ հոսքը որպես հոգեւոր սրբազան սնունդ, կենսատու աղբյուր ընկալել եւ հանդուգն վերլուծությունների չտրվել, գերծ մնալ մտքերի խռովությունից եւ հիշողությունների գրոհից, որոնք խաթարում են Աստծուն մոտեցնող խաղաղ ընթացքը։ Աստվածաշունչի ընթերցանությունը Տիրոջ շնորհի մեջ մնալու ամենագործուն միջոցն է. «Աստուց մեզ պարզեցված Սուրբ Գրքերը լույս են եւ լուսավառվում են մեր մտքերում ու լուսավորում՝ գրվածքների միջոցով հոգեղենը տեսնելու» (Լուծմ. Դիոնիսիոսի, 12ա)։ Առանց Տիրոջ խոսքով իմաստանալու՝ անհնար է աստվածահաճ կյանքով ապրել։ Դադարով վերադառնալու խոսքին՝ մեր միտքն ու հոգին սրբագործվում են մեղքերի ծանրաբեռնությունից եւ պայծառանում հոգեւոր լույսով, ուստի փառաբանեք Աստծուն՝ Իր մեծագույն եւ անգնահատելի պարգևի համար՝ հիշելով Դավիթ արքայի խոսքերը.

«Հիրավի, սիրեցի քո պատվիրանները ոսկուց ու տպագրուց ավելի։ Ըն բոլոր պատվիրաններն ինձ հաջողություն բերին, քանզի ատեցի ճանապարհը չարիքի» (Սաղմ. ԺԺԸ 127-128)։

Արքիմե ԶԱՆԹԻԿՅԱՆ



աղաքակրթության պատմության ընթացքում կրոնը մշտապես առանցքային նշանակություն է ունեցել։ Մարդը հասարակական եւ կրոնական էակ է։ Նախամարդու վրա մոգական տպավորություն էր թողնում բնական երեւույթների առեղծվածը, որն իրենից ներկայացնում էր «ի՛նչ»-երի եւ «ինչո՞ւ»-ների երկար մի շարք։ Պատմության մեջ հնարավոր չէ գտնել մի ժողովուրդ, որը կրոնական հավատալիք ունեցած չլիներ։ Եթե անգամ հասարակությունը հայտարարում է, որ ինքն անաստված (աթեիստ) է, ինչպես դա եղավ խորհրդային կարգերի ժամանակ, ապա գործնականում մարդիկ, միեւնույն է, գտնում են կրոնին փոխարինողներ, օրինակ՝ «անսխալական մարդիկ», «ուսուպիական նպատակներ, իդեալներ» եւ այլն։

Կրոնը բխում է աշխարհի հետ մարդու ունեցած այն նախնական փորձառությունից, որ մարդ արարածից վեր գոյություն ունի մեկ այլ գորություն, որը տնօրինում է մարդու կյանքը եւ գտնվում է տիեզերական տարածքներից վեր։ Ուստի կյանքի եւ մահվան իրողությունը մարդու մեջ արթնացնում է դրանք տրված լինելու գիտակցությունը։ Մարդիկ բոլոր կրոններում կեցության մասին փնտրում են մի վերջնական պատասխան՝ ո՞վ է մարդը, որո՞նք են կյանքի իմաստն ու նպատակը, ի՞նչ է մահը եւ այլն։ Կրոնի գլխավոր նպատակներից մեկը մարդու փրկությունն է։ Ընդհանրական իմաստով փրկությունն նշանակում է ազատագրում։ Իսկ կրոնական իմաստով փրկությունն նշանակում է այն երանելի վիճակը, որին ձգտում են հավատաքյալները։

Դեռ անտիկ շրջանում «կրոն» բառի վերաբերյալ ձեւավորվել են երկու մեկնաբանություն՝ փիլիսոփայական եւ աստվածաբանական։ Ըստ առաջին մեկնաբանության, որն առաջ է քաշել հռոմեացի հռետոր եւ փիլիսոփա Ցիցերոնը, «կրոն»

## Ի՞ՆՉ Է ԿՐՈՆԸ

բառն առաջացել է relegere բայից եւ նշանակում է վերանայել, մտածել՝ դրանով իսկ ընդգծելով կրոնի՝ մարդկային չափողականությունը։

Ըստ երկրորդ մեկնաբանության, որն առաջ է քաշել քրիստոնյա գրող Լակտանցիան, «կրոն» բառն առաջացել է religare բայից, որը նշանակում է միացնել։ Այսինքն՝ կրոնը միավորում է մարդուն Աստծո հետ։

Նոր ժամանակներում հայ լեզվաբան Զր. Աճառյանը «Յայերեն արմատական բառարանում» նշում է, որ «կրոն» նշանակում է կարգ, կանոն, վարք, օրենք, սովորություն, վարդապետություն, հավատք եւ այլն։

Շատերն են փորձել տալ կրոնի հստակ սահմանումը, բայց մինչ օրս ոչ ոք չի հաջողվել։ Կրոնը բազմաշերտ երեւույթ է, եւ իբրեւ սոցիալական հիմնական ինստիտուտներից մեկը՝ կարելի է դերակատարում ունի հասարակական կյանքում։

Կրոնի վերաբերյալ գոյություն ունեն որոշակի տեսակետներ՝ փիլիսոփայական, սոցիոլոգիական, հոգեբանական, աստվածաբանական եւ այլն։

Փիլիսոփայությունը դոգմատիկ համակարգ չէ, ուստի պատահական չէ, որ կրոնի վերաբերյալ տարբեր փիլիսոփաներ տարբեր սահմանումներ են տվել։ Ռուս փիլիսոփա եւ աստվածաբան Ֆլորենսկին կրոնը սահմանում է այսպես. «Եթե գոյաբանորեն կրոնն Աստծո կյանքն է մեր մեջ եւ մեր կյանքը՝ Աստծո, ապա երեւութապես կրոնն այնպիսի գործողությունների եւ ապրումների համակարգ է, որն ապահովում է հոգու փրկությունը», իսկ գերմանացի փիլիսոփա Ֆոյերբախն ասում է. «Կրոնի էությունն ու գիտակցությունը սպառվում է նրանով, որ գտնվում է մարդու էության, գիտակցության եւ ինքնագիտակցության մեջ։ Կրոնը չունի սեփական, հատուկ բովանդակություն»։

Սոցիոլոգները կրոնը դիտարկում են հասարակական զարգացման դիսմիկայի մեջ։ Ֆրանսիացի սոցիոլոգ Էմ. Դյուրկեյմը գրում է, որ կրոնը հավատալիքների եւ գործողությունների համակարգ է, որը միավորում է մարդկանց մեկ բարոյական հանրության մեջ, ինչը կոչվում է Եկեղեցի։

Ինչ վերաբերում է հոգեբանությանը, ապա այն գործ ունի կրոնի հետ՝ որպես հոգեբանական երեւույթ։ Հոգեբանությունը կրոնը դիտարկում է որպես անհատի ապրում, որով կարելի է ազդել մարդու կամ մարդկային խմբերի վրա։ Հոգեվերլուծող Զ. Ֆրեյդը կարծում է, որ կրոնը համապարփակ խմբային նեւրոզ է։

Ըստ ուղղափառ աստվածաբան Օսիպովի՝ կրոնի համար «առաջնայինն ու գլխավորը անձնական, հոգեւոր, կատարյալ, վերերկրային Սկզբի՝ Աստծո դավանությունն է, որը բոլոր գոյերի աղբյուրն է, այդ թվում եւ՝ մարդու»։ Այլ մեկնություն է, որ Աստված ստեղծել է մարդուն՝ ըստ Իր պատկերի եւ նմանության։ Մարդու հոգին Արարչի մասնիկն է, դրա համար էլ գոյություն ունի մարդու հավերժական ձգտումն առ Իր Արարիչը։ Դեռ այդ ձգտումն է ընկած կրոնի հիմքում։ Իսկ Զայ Եկեղեցու 20-րդ դարի աստվածաբաններից Արշակ Տեր-Միքելյանը հետեւյալ տեսակետն է արտահայտում. «Կրոնը մարդու անձնա-



կան էության հաղորդակցությունն է Աստծո հետ, որի գործողությունից է կախված նրա էության կատարելությունը։ ... Կրոնն ինչպես որ հաղորդակցությունն է Աստծո հետ, այնպես էլ նմանների միջեւ, որով եւ կառուցվում է անձեռնմխելի միություն»։

Կրոնը՝ անբացատրելի բացատրությունը, որն անփոխարինելի ազդեցություն է ունեցել տարբեր ժողովուրդների մշակութային ձեւավորման, զարգացման վրա, եղել է շատ երկրներում առ այսօր էլ շարունակում է մնալ որպես պետական գաղափարախոսության հիմք, օրենքները սնող աղբյուր, եկավ պատասխանելու խորհրդավորին, կատարյալին, անըմբռնելիին։

Դավիթ սրկ. ԳՄԱՅԱԿՅԱՆ

## Նոր նշանակումներ

Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Շայրագոյն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի տնօրինությամբ կատարվել են Մայր Աթոռ Սրբ. Էջմիածնի միաբանների Նոր նշանակումներ։ Խորեն վրդ. Հովհաննիսյանը նշանակվել է Ս. Գայանե վանքի վանահայր, Իսահակ վրդ. Պողոսյանը՝ Մայր Աթոռի սոցիալական ծառայության տնօրեն։


Անդրանիկ արեղա Գեւորգյանը, ազատվելով Ս. Գայանե վանքի վանահոր պարտականություններից, կշարունակի ծառայել Մայր Աթոռի կալվածոց տեսչության տնօրենի պաշտոնում։

Լրատվական կյուրթըրը

ՄԱՅՐ ԱԹՐՈՒ ՍՐ ԷՋՄԻԱԾՆԻ ՄԻԱԲԱՆՆԵՐԻ ՆՈՐ ՆՇԱՆԱԿՈՒՄՆԵՐ

Մարկեռնի օլեսնիճԿի

ՆԱՐԱՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՎՂՔՎՏՈՒԹՅՈՒՆ



Սկիզբը՝ 2013-ի թիվ 24, 2014-ի թիվ 1

Գ) Մեր եւ հարգանք մերձավորի նկատմամբ

Հարգելով եւ սիրելով սեփական անձը՝ պետք է նաեւ սիրել ու հարգել մերձավորին՝ ըստ Տիրոջ այն խոսքի, թե «պիտի սիրես քո ընկերոջը, ինչպես քո անձը» (Մատթ. ԻԲ 39):

Մերձավորի նկատմամբ հարգանքը հիմնվում է ինչպես նրա մարդկային, այնպես եւ անձնական արժանիքների վրա: Պարտավոր ենք հարգել դիմացիներին, որովհետեւ նրանցից ամեն մեկն Աստծո պատկերն է, նրանցից յուրաքանչյուրի համար է Հիսուսը խաչի վրա Իր արյունը հեղել, եւ յուրաքանչյուր ոք, վերջապես, կոչված է հավիտենական կյանքի՝ Աստծո հետ միավորվելով: Սրանում է մերձավորի մարդկային արժեքը: Իսկ եթե մերձավորը քրիստոնյա է, ապա նա վերածնվել է մկրտության սուրբ ավազանից եւ նույն Եկեղեցու անդամ է: Սակայն մեր մերձավորն ունի նաեւ անձնական արժանիքներ՝ պայմանավորված սեփական բարոյական արժեքներով: Այս պարագայում պարտավոր ենք առավել հարգել մեր մերձավորին: Բայց քանի որ մեր մերձավորները զգալիորեն տարբեր են թե՛ անձնական եւ թե՛ բարոյական ար-

ժանիքներով, ուստի արժանի են հարգանքի տարբեր չափով: Այս մասին մեզ շատ հստակ ուսուցանում է Սուրբ Գիրքը: Հիսուս Քրիստոսն առանց «ամոթի» մեզ անվանում է եղբայրներ՝ պատվիրելով հարգել Աստծո պատկերը՝ մարդուն, եւ խիստ դատապարտում մերձավորին անարգողին. «Ամեն մարդ, որ իր եղբորն ասի հիմար, ենթակա կլինի դատաստանի, եւ ով իր եղբորն ասի՝ ապուշ, ենթակա կլինի գեհեմի կրակին» (Մատթ. Ե 22): Պետրոս առաքյալը պատվիրում է. «Հարգեցե՛ք բոլորին» (Ա Պետ. Բ 17): Իսկ Պողոս առաքյալը խրատում է. «Եղբայրասիրության մեջ՝ միմյանց հանդեպ լինել գթասիրտ, պատիվ տալու մեջ՝ միմյանց գերազանցել» (Յոհ. ԺԲ 10): Հարգանքը հակառակ է անարգանքին եւ անգամ մերձավորի հանդեպ արհամարհանքին: Մենք չպետք է արհամարհենք նույնիսկ բարոյապես անարժան եւ արատավոր մարդուն, այլ կարող ենք եւ պարտավոր ենք հեռու պահել դրանցից: Այսպիսով, հեռանում ենք ոչ միայն մարդուց, այլեւ արատներից, որոնք առկա են դիմացիների մեջ: Առանց լուրջ պատճառի՝ անձից հեռու մնալը ճիշտ չէ, քանի որ թերություններին զուգահեռ՝ մարդու մեջ կան նաեւ դրական հատկանիշներ (քանի դեռ նա չի հասել դիվական վիճակի): Արատավոր մարդուն չպետք է արհամարհել, այլ պետք է փոր-

ձել նրան կանգնեցնել ճշմարիտ ճանապարհին: Հիշենք առաքյալի խոսքերը. «Կարող է Տերը նրան կանգուն պահել» (Յոհ. ԺԴ 4), «Մերը ամեն բանի դիմանում է, ամեն բանի հավատում, մշտապես հույս է տածում, ամեն բանի համբերում» (Ա Կորնթ. ԺԳ 7): Ավետարանը վկայում է, որ Հիսուսն արհամարհանքով չի վերաբերվել անարժաններին, օրինակ՝ փարիսեցիներին: Տիրոջ Որդին դատապարտում էր նրանց, սակայն դատապարտելով նաեւ կարեկցում (Մատթ. ԻԳ 2, 37): Արդ, ի՞նչ կարող ենք ասել բոլորին քամահրանքով վերաբերվելու մասին: Ի դեպ, ոչ վաղ անցյալում գերմանացի փիլիսոփա Շոպենհաուերը (1788-1860 թթ.) զարգացրեց փիլիսոփայական մի ուղղություն, որը սովորեցնում էր արհամարհել մարդկանց: Մենք սովորաբար քամահրանքով ենք վերաբերվում ուրիշներին՝ եսասիրության պատճառով:

Հարգելով մերձավորին՝ պետք է սիրենք նրանց: Մերն արտահայտվում է դիմացիին բարիք ցանկանալու, նրա հոգու եւ մարմնի բարեկեցությանը նպաստելու ձգտումով: Այսօր շատերն են խոսում մարդասիրության (ֆիլոտրոպիա) եւ մարդկայնության մասին: Սակայն այս երկուսը տարբեր են միմյանցից՝ քրիստոնեական ճշմարիտ սիրո համաձայն: Մարդասիրությունը բխում է բոլոր մարդկանց հանդեպ տածած հարգանքից: Աստեղծելով մարդկային սխալական բնության արատները՝ անձն ի վիճակի չէ տեսնելու դիմացիի այլատեսության խորությունը, հետեւաբար՝ նաեւ բուժելու դրանք: Այս դեպքում նկատի է առնվում մերձավորի երկրային բարեկեցությունը միայն՝ չմոռանալով սեփական շահերի մասին: Այսինքն՝ մարդը փնտրում է ոչ թե Աստծու փառքը, այլ՝ սեփական ետը: Սակայն քրիստոնեական ճշմարիտ սերը բխում է Աստծո հանդեպ սիրուց՝ չանտեսելով մարդկային ցեղի բոլոր արատները եւ առաջարկելով դրանց բուժման հնարավորություններ:

Այս ճանապարհով ապահովվում է ոչ միայն երկրային բարեկեցությունը, այլեւ առավել շեշտադրվում է հավիտենական երկնայինը՝ համակված ինքնամերժումով եւ Աստծո փառքին արժանանալու ձգտմամբ: Սակայն «մարդասիրություն» բառը կարող ենք հասկանալ առավել բարձր՝ քրիստոնեական ճշմարիտ սիրո իմաստով: Պարզապես պետք է տարբերել իրական մարդասիրությունն անիրականից եւ ոչ լիարժեքից: Ինչպես որ պետք է հարգանքն անխտիր տարածել բոլորի վրա, այնպես եւ մերձավորի հանդեպ տածած սերը պետք է առանց բացառության փարի բոլորին: Սամարացու առակով Աստվածորդին պատգամում է բարիք գործել դիմացիին՝ առանց ազգի, կրոնի եւ բարոյական արժեքների խտրականության (հմմտ. Ղուկ. Ժ 29): Բայց քանի որ մենք չենք կարող հարողակցության մեծ դաշտ ստեղծել մարդկանց հոծ բազմության հետ, պետք է հոգ տանենք մերձավորների հանդեպ, որոնց հետ գտնվում ենք մտերմիկ եւ շեղմ հարաբերությունների մեջ: Այս գաղափարը նույնպես արտահայտված է Քրիստոսի պատմած «Բարի սամարացին» առակում: Մերձավոր են կոչվում նրանք, որոնց բախտ է վիճակվել բարեգործություն անելու (հմմտ. Ղուկ. Ժ 36-37): Պողոս առաքյալը տարբերակում է եղբոր եւ մեր-

ձավորի հանդեպ տածած սերերը: Նա «եղբայր» կամ «մտերիմ» է անվանում հավատակցին (Յոհ. Ը 17, 29, Գաղ. Գ 26, Դ 26, Եբր. Գ 1): Հետեւաբար քրիստոնյաներն առավելապես մեր եղբայրներն են, որոնց համար պետք է բարեգործություն անել. «Բարին գործենք բոլորի հանդեպ, մանավանդ հավատի մեջ մեր հարազատների հանդեպ» (Գաղ. Զ 10): Մեր եղբայրների հանդեպ տածած սիրով պետք է սովորենք սիրել բոլոր մերձավորներին: Ինչպես Պողոս առաքյալն է ասում. «Եվ ինքը՝ Տերը, թող աճեցնի եւ առատացնի ձեր սերը, որ ունենք միմյանց հանդեպ եւ բոլորի հանդեպ, ինչպես եւ մենք՝ ձեր հանդեպ» (Ա Թես. Գ 12): Մեր մերձավորները մեծավ մասամբ ուղղափառ քրիստոնյաներն են, որովհետեւ գտնվում են մեզ հետ բարեկամական հարաբերությունների մեջ, եւ մեծ հնարավորություններ ու առիթներ ունենք թե՛ միմյանց եւ թե՛ ուրիշներին բարեգործություն անելու: Նույն հարաբերությունների մեջ ենք գտնվում նաեւ մեր բարեկամների կամ մեր խնամքի տակ գտնվողների, բարեկամ ժողովուրդների ու պաշտոնակիցների, ինչպես նաեւ՝ նույն քաղաքի բնակիչների եւ այլոց հետ: Նրանք են մեր մերձավորները:

Շարունակելի

Ռուսերենից թարգմանեց Օլգա ՅՈՎՅԱՆՆԻՍՅԱՆԸ



ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ 1960-1980-ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ

շում ժամանակակից կյանքի ու ժամանակակից մարդու ամենօրյա դրաման: Դավիթ ԳՍՄՊՈՐՅԱՆ Բանասիրական գիտ. դոկտոր, պրոֆեսոր

Սկիզբը՝ էջ 5  
Հայաստանի խորհրդայնացման պատմական իրադարձություններին են նվիրված նաեւ Գ. Գեորգյանի «Կապույտ ձիավորը» (1967), Ա. Արաքսմանյանի «Պատեր անդունդի եզրին» (1970), Ա. Շահինյանի «Բանտարկյալը» (1971), Ս. Հարությունյանի «Դեռ կգա մեր գրահապտը» (1975) դրամաները, որոնցում իրենց արտացոլումն են գտել Մայիսյան ապստամբությունը, հեղափոխական գործիչների կենսագրական առանձին դրվագներ: Արաքսմանյանի եւ Շահինյանի դրամաներում հերոսները վերածվել են առանձին խորհրդանշանների եւ գործում են պայմանական վիճակներում: Խորհրդանշան կերպարները մոլորում են ավելի մեծ ընդհանրացումների. մի կողմից՝

զաղափարական պայքարի մարտիկ-բանտարկյալներ, մյուս կողմից՝ հին վարչակարգի ներկայացուցիչ բանտապետեր: Արաքսմանյանի հերոսներն ավելի վերացական են, իսկ Շահինյանն ընդհանրացված կերպարները ներկայացրել է անհատական մարդկային գծերով՝ չանտեսելով նրանց արարքների հոգեբանական հիմնավորման անհրաժեշտությունը: Նախկինում շրջապատի ծաղրին արժանացած բանտապետն այսպես է արդարացնում իրեն. «Ես... հո բանտապետ չեմ ծնվել, բժիշկ: Մարդիկ, մարդիկ են իրենց բանտն ու բանտապետն ստեղծում: Բանտ, ահա միակ տեղը, որտեղ կարող էի իմ վրեժը լուծել մարդկանցից» («Տրամվայը պարկ է գնում», ժողովածու, 1981, էջ 97): Այս

ընդդրված մեջ է նաեւ Վ. Շողոթյանի «Եռապատում» (1970) դրաման, որի երեք պատումներն արտացոլում են հայ ժողովրդի պատմության երեք առանձին, բայց տրամաբանորեն իրար շարունակող շրջաններ՝ Սարդարապատի ճակատամարտը, Երկրորդ համաշխարհային պատերազմը եւ 1960-ական թթ. կյանքը: Նյութը՝ նյութ, ժամանակի պահանջը՝ ժամանակի պահանջ, բայց թատրոնի, արվեստի, գեղարվեստի պահանջները չբավարարվեցին: Ամեն ինչ մնաց միջին գծից ցածր: 1960-1980-ական թթ. հայ թատերգությունը հիմնականում ընկալվել է նյութի կուտակման ճանապարհով՝ իր ընդգրկումների մեջ ստեղծելով թե՛ քիչ, բայց նկատվող կատակերգություններ

ու դրամաներ: Բայց եւ նյութի կուտակումը մեծ մասամբ չի փոխհատուցվել ոճական բազմազանությամբ, եւ որ ամենակարեւորն է՝ գեղարվեստական լուրջ նվաճումներով: Ծատ բան մնացել է մակերեսի վրա, եւ շատ ու շատ թատերգությունների առիթով անհրաժեշտ է ասել, որ դրանք կարող էին բեմական կարճատե կյանք ունենալ կամ ունեցել են, բայց գրական կյանք՝ որպես գեղարվեստական արժեք, չունեն: Ուստի եւ դրանց տպագրությունը՝ որպես գրական ստեղծագործություն, զգալի չափով չի արդարացնում իրեն: Ժամանակն է, որ հայ թատերգությունը թողափի գրական մյուս սեռերից ունեցած իր որակական խզումը եւ գեղարվեստական զարգացման մեջ ապահովի առաջապահ դիրք: Դա է պահան-

ՔՐԻՍՏՈՆՅԱ ՉԱՅԱՍԱՆ  
Կրոնական, մշակութային, լրատվական երկշաբաթաթերթ  
Հիմնադիր՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին  
Հրատարակիչ՝ «Քրիստոնյա Հայաստան» թերթի խմբագրություն  
Գլխավոր խմբագիր՝ Աստղիկ Ստամբոլցյան  
Գրանցման վկայական՝ 624  
Խմբագրության հասցեն՝ Մայր Աթոռ Սբ Էջմիածին  
Հեռախոս՝ 517197  
Էլ. փոստ՝ qh@etchmiadin.am  
astghikstam@gmail.com  
web կայք՝ kh-tert.livejournal.com  
krishayas.wordpress.com  
Ստոր. տպագր. 3.2.2014 թ.  
Տպագրանակը՝ 2100  
Գինը՝ 50 դրամ